



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեղմելով կամ օգտագործել անկա նյութը առեղծված համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material







ՆՈՐ ԽԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՄԻԶԱԶԳԱԹԻՆ ԳՐԱԳԻՏՆԵՐ

83
3-17

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԳԵՏՆԵՐ

II.

ՍՅՆՓԱՆ ՑՈՒԱՅԳ

ԱՆԴՐԷԱՍ ԼԱՅԿՈ

ԳՐԾՑ

Ս. ԱՐԵՒԵԱՆ



ԲԵՐԼԻՆ

1923

13444

A " 66754

8759

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՊԵՏԱԲԵՐԱԾԸ

Արդի Հասարակարգի մէջ գրողի եւ արուեստագէտի ազատութիւնը պատրանք է միայն: Գրականութիւնը ենթակայ է քաղաքականութեան, եւ ընդհանրապէս գնում է այն ճանապարհը, որ տիրող դասերը գծում են նրա համար:

Իր սկզբունքի մէջ ինչ պիտի լինի գրականութեան, բանաստեղծութեան, արուեստի դերը: Մտանցնել ժողովուրդները միմեանց, նրանց մէջ տարածել հանրամարդկային գաղափարներ, նրանց հաշտողել այն, ինչ որ «բարի» է, «ճշմարիտ» է, «գեղեցիկ» է:

Բայց սա միայն սկզբունք է եւ իդէալ: Իրականութեան մէջ այն գրականութիւնը, որի մասին մենք յաճախ անթոյլատրելի ներքողներ ենք կարդում, ոչ ազատ է եւ ոչ էլ ճշմարիտ, այլ ստրուկ է եւ մեծ մասամբ սուտ:

Այժմեան գրականութիւնը եւ այժմեան արուեստը գործիք են քաղաքականութեան ձեռքին: Եթէ իրօք ազատ լինէր եւ եթէ անկախ լինէր եսասէր ու շահախնդիր քաղաքականութիւնից՝ նա պիտի ծառայեր ազգերի եղբայրութեան եւ պիտի ասէր ճշմարտութիւնը ամենին անխափր:

Գրականութեան ազնիւ դերը հայ բանաստեղծը բնորոշել է մի երկաստիճանով, որի վրայ ժողովրդական ստեղծագործութեան եւ ժողովրդական իդէալի կնիքն է երևում:

«... Աշուղի լեզուն դրիստն է ասում՝ ամեն մի քանին,
Միշտ մէկն է ասում՝ նա թէկուզ ետրին, թէկուզ դուշմանին:»

Եւ կամ աշուղի համար՝

«Հաւասար մարդ են թէկուզ քրիստոնեան, թէ մահմետական:»

Արդեւ զի իրօք «աշուղի լեզուն» ճշմարտութիւնն ասի թէ հակառակորդին թէ բարեկամին — հարկաւոր է գրականութիւնը ազատել տիրող դասերի իշխանութիւնից: Նրանք, որոնք խօսում են այժմեան «մաքուր» արուեստի մասին եւ ըմբոստանում են ամեն անգամ, երբ մի գրագէտ դուրս է գալիս յօռի շրջանակից — պարզապէս մոլորուած են, եթէ միայն տիրող կարգերի գիտակցական գործիքները չեն:

Պատերազմը ցոյց տուեց, թէ ինչպիսի քառս է տիրում արուեստի եւ գրականութեան սահմանում: Գրամատերական դասերի նիւթած ընդհարումը ցոյց տուեց, թէ «մարտը» արուեստ եւ «ազատ» գրականութիւն խօսքերը միմեայն Տնչիւններ են, որոնք ոչ պարունակութիւն ունին եւ ոչ որ եւ է հիմք: Լաւրպական Տոչակաւոր գրողները եւ գիտունները դուրս եկան միմեանց դէմ՝ խրաքանչիւրը կանգնած իր կառավարութեան կողքին, կրկնելով այն կեղծաւոր ֆրազները, ինչ որ ամեն օր արտասանում էին օրագրողները եւ գիւտնագէտները:

Այժմ երկիր ազատ շինաց բարոյական այս զարհուրելի անկումից: Պրանսիան, Գերմանիան, Անգլիան եւ բոլոր միւս երկիրները հաւասարապէս նշանաւոր դարձան այդ ասպարիզում, ինչպէս նշանաւոր էին իրար աւերելու եւ ոչնչացնելու գծովային դարձի մէջ:

Յայտնի է գերմանական գիտունների տիրահաշակ կողմ, որով նրանք ջնքով պաշտպան էին կանգնում Ախշելիմ կայսեր ռազմական քաղաքականութեան եւ միաստարանում էին այն աւերումները, որ կայսերական բանակները գործում էին իրենց սրաբաւ յարձակման ընթացքում: Յայտնի է նաեւ գերման անուանի արուեստագէտ Գերհարդ Հաուպտմանի բարոյական նշնութիւնը գերման զօրավարների սկզբունքների եւ գործերի հետ:

Բայց Տշմարտութիւնը եւ իսկական արուեստը երկար ժամանակ չէր կարող մնալ զինուորական գարշապարի տակ: Արքան էլ ծանր լինէր տիրող դասակարգների բռնութիւնը, այնուամենայնիւ աշխատաւոր ժողովուրդը իր մէջ կենդանի էր պահում ժողովուրդների հաւասարութեան, եղբայրութեան յաւիտենական իդէալը: Եւ ժողովրդական այս իդէալը կապանքների միջոց փորձում էր դուրս գալ մերթ սոցիալական շարժումների ձեւով, մերթ հրապարակագրութեան, գիտութեան, գրականութեան կերպարանքով:

Կարլ Լիբկնիխ սոցիալական կեանքի եւ հրապարակագրութեան մէջ, Պրոֆէսոր Կիկոլաի գիտութեան մէջ, Ստեֆան Եուայգ, Լէոնհարդ Պրանկ, Հայնրիխ Մանն, Անդրէաս Լացկո, Պրանց Իւնգ եւ ուրիշները գրականութեան մէջ — գոնե որոշ շրջանի համար — սկզբնաւորում էին ժողովրդական միեւնոյն իդէալից: Սոցիալական կեանքի յետագայ կառուցման նկատմամբ նրանք չուենին միեւնոյն սկզբունքները եւ մանաւանդ միեւնոյն մեթոդը: Բայց նրանք մտաւնում էին պատերազմի դէմ եւ պահանջում էին ժողովուրդների խաղաղութիւնը:

Եհա այսպէս: Պատերազմի սարսափելի տարիներում Գերմանիայի մէջ դուրս եկան բանաստեղծներ եւ վիպաստներ, որոնք բմրոտացան այսպէս կոչուած Ախշելիմ դարի դէմ, որոնք մարդկային կարստով երգեցին ժողովուրդների եղբայրութիւնը:


Եւր բանաստեղծներից եւ վիպասաններից շատերը մնացին ոգեւորուած խաղաղասէրների գերում, ոչ այն մարով, որպէս եղան խաղաղասէրները քաղաքական ասպարիզում: Նրանք աւելի անկեղծ էին, ներշնչուած էին, նրանք ազգայնականներ չէին քաղաքական խմաստով, նրանք զգացմունքով միեւնոյն

գային համակրութիւններ ունէին: Ինչ որ նրանց պակասում էր, այն սոցիալական եւ գրական գիտակցութիւնն էր, թէ տիրող դասերի տապալումով միայն հնարաւոր էր Միջազգայինը իրականացնել եւ այս ճանապարհով միայն կարելի էր վերջ տալ նուաճողական, դրամատիրական դաժան պատերազմին:

Իայց այդ գրողներինց ոմանք հեռզհետէ կարողացան մինչեւ այն կէտը հասնել, թէ պատերազմը ունչացնելու համար խաղաղասիրական քարոզները բաւական չեն, թէ հարկաւոր է ոյժ, հարկաւոր է ներքին յեղաշրջում: Արանք հեռզհետէ հասկացան, որ խաղաղութիւնը մի կրաւորական իր չէ եւ որ նա ներքնապէս աւելի ներգործական է եւ աւելի կենդանի, քան իրար ունչացնելու ետական գործողութիւնը: Արանք սկսեցին հասկանալ, թէ խաղաղութիւնն իրականացնելու համար հարկաւոր է կռիւ մղել հակառակորդ ոյժերի դէմ եւ ի հարկին արիւն թափել այդ ճակատագրական ճանապարհի վրայ:

Ստեփան Յուայգ գերմանացի այն երիտասարդ գրողների շարքին էր պատկանում, որոնք բարձր պահեցին գրականութեան դրօշը եւ արուեստի իդէալը, եւ որոնք հասկացան, թէ Գերմանիան բարձր է ոչ իր զինուորական ոյժով, այլ իր իմաստասիրական-գեղարուեստական ոգով:

Գէօթէի շունչը մեռած չէր պատերազմական ժխորի մէջ: Եւ երիտասարդ գրողների հոգում խօսում էր իդէալական Գերմանիան:



II.

ԳԺԵՐ ՏՈՒՆՏԵՂԻ ԿԵՆՆՔԻՑ ԵՒ ԳՈՐԺԻՑ

Ստեփան Յուայգ ծնուել է Վիկնայում, 1881 թուին: Գերմանական գրականութեան մէջ անուանի գրագէտ չէր պատերազմից առաջ, մանաւանդ որ տարիքով բաւական երիտասարդ էր: Հետզհետեւ սակայն Ստեփան Յուայգ ծանալուց ոչ միայն իր հայրենիքում, այլ և եւրոպական միւս երկիրներում:

Ստեփան Յուայգ բանաստեղծ է, թատերագիր, քննադատ: Իբրեւ բանաստեղծ՝ գեղեցիկ ձեւի և երաժշտական ոտանաւորի տաղանդաւոր կերտողներին է գերման նորագոյն գրականութեան մէջ: Միմրօլիտական բանաստեղծութեան ստեղծած ազատ շափր և նուագային լեզուն շատ յաջող կիրառութիւն գտան Յուայգի բանաստեղծութիւնների մէջ: Ըյս տեսակէտից Յուայգ բաւական մօտ է Վերլէյնին և Վերհարընին, որոնց լաւ ծանալող է և շերմագին գնահատող:

Ստեփան Յուայգ կարեւոր նշանակութիւն ունի մանաւանդ որպէս արուեստագէտ թարգմանիչ: Գերմանական գրականութեան շրջանակի մէջ չէ ամփոփուել նա, այլ նայել է դուրս, և ինչ որ գտել է ուրիշ գրականութիւնների մէջ գեղեցիկ ու արժէքաւոր, թարգմանել է գերման լեզուով:

Գրանսիական գրականութեան մէջ Ստեփան Յուայգ ամենից շատ սիրել է Ռոմէն Ռոլանին: Նա իր գրական և գեղարուեստական իդէալը պատերազմական ծանր տարիներում տեսել է Ռոմէն Ռոլանի անձնաւորութեան մէջ: Դրա շնորհիւ գերմանական գրականութիւնը ունի այսօր մի գեղեցիկ, ընդարձակ ուսումնասիրութիւն Ռոլանի մասին, որի նմանը չկայ մինչև իսկ ֆրանսիական գրականութեան մէջ: Ըյգ ուսումնասիրութեան մէջ Ստեփան Յուայգ յայտնարերել է Ռոլանի և առհասարակ ֆրանսիական գրականութեան վերաբերմամբ բացառիկ հմտութիւն: Հանդարտ, գրաւիչ, հոգեբանական ոճով և վերլուծութեամբ նա պատկերացնում է մի գէմբ, որ ոչ միայն մարդը արուեստագէտ է, այլ և մարդկային իդէալների համալուծած, համարձակ արտայայտիչ է:

Ստեփան Յուայգ թարգմանել է նաև Էմիլ Վերհարընի երկերից երեք հատոր, այն երկերից, որոնք գրուած են պատերազմից առաջ և որոնց մէջ արտափայլում է հանրամարդկային իդէալը:

Բացի ֆրանսիական գրականութեան էլերից՝ Ստեփան Յուայգ թարգմանել է նաև անգլիական գրականութիւնից Չարլզ Դիկենսի վէպերը: Եւ բացի անգլիական գրականութիւնից՝ զբաղուել է նաև ռուսական գրողներով: Ստեփան Յուայգ ռուսական արուեստի և գրականութեան խորին համակրողներին է: Մասնաւորապէս սիրում է նա Լև Տոլստոյին և Դոստոեւսկուն, նրանց բարձր արուեստի և բարոյական խորրի համար: Դոստոեւսկու մասին ունի մի քննադատական ուսումնասիրութիւն, գրուած իմաստասիրական և գեղարուեստական անկեղծ տրամադրութեամբ: Ըյն պրօբլէմները, որ ար-


ծարձել է Դաստոնվակին իր գրականութեան մէջ, Ստեփան Եւայգի արուեստի հետ կապուած են սերտօրէն, մանաւանդ նրա վերջին շրջանում:

Ստեփան Եւայգ կամեցաւ մերձեցման մէջ դնել գերմանական, ֆրանսիական, անգլիական, ռուսական գրականութիւնները, լրացնել եւ ամբողջացնել նրանց արժէքը փոխադարձաբար, կապելով արուեստը եւ խնդիրները միմեանց հետ, որպէս թէ նրանք մի միջազգային գրականութեան արտայայտութիւն լինէին: Նա մի եւրոպական ոգի է, հաւասարապէս բաց բոլոր քաղաքակրթութեան հանդէպ եւ համակիր բոլոր ժողովուրդների ստեղծագործութեան:

Հասկանալի է, որ մի այսպիսի հանրամարդկային ոգի շատ պիտի տանջուէր պատերազմի սարսափելի իրողութեան հանդէպ: Ստեփան Եւայգ ունենում է հոգեկան եւ բարոյական ծանր տագնապներ: Բղէտը նրա վրայ խիստ ազդեցութիւն է անում, ոտքի տակ առնելով նրա փայտայած իղէալը եւ միջազգային հաւատը:

Բայց այդ նուրբ արուեստագէտը եւ միջազգային գրականութեան այդ անկեղծ աշխատաւորը շուտ կրաւորական տանջանքների մէջ: Բրուստատգէտը զգաց, որ միայնութեան եւ լուսութեան մէջ չէ իր գերը: Անհրաժեշտ էր ներգործական ստեղծագործութիւն՝ կրաւորական եւ ազարդին տառապանքների փոխարէն: Անհրաժեշտ էր պայքարել պատերազմի դէմ՝ յանուն մի իղէալի, որ բովանդակ մարդկութեանն է եւ առանց որի չի կարող լինել ազնիւ, բարձր գրականութիւն:

Եւ այն ժամանակ, երբ «Weber»-ի հեղինակը փառաբանում էր գրամտիրական դասերի պատերազմը, այն ժամանակ, երբ գերմանական կայսեր զօրքերը հզօրազօր յաղթանակներով արշաւում էին արեւմուտք թէ արեւելք, հարաւ թէ հիւսիս — Ստեփան Եւայգ կանգնեց այդ ծանր իրողութեան դէմ, դատապարտեց պատերազմն ու յաղթութիւնները եւ ստեղծագործեց մի երկ — «Jeremias» — որի մէջ սրտայայտ խորութեամբ երգուած է խաղաղութիւնն ու ժողովուրդների եղբայրութիւնը:



III.

„JEREMIAS“

(*Երեմիա:)

1. Նիւթը:

Ստեփան Եւալդի այս երկը, որով նա ճանաչուեց Գերմանիայից դուրս, գրուած է 1915—1917 թուականի ընթացքում եւ հրատարակուած է Լայպցիգ, 1918 թուին:

Նիւթն առնուած է հրէական հին պատմութիւնից, Երուսաղէմի կործանման ժամանակաշրջանից: Շատ հին գէպքեր են պատմուած այդտեղ, հին ժողովուրդների եւ դասերի յարաբերութիւններ են վերլուծուած — բայց երկը այդ ալեւոր հնութեան մէջ գերազանցապէս այժմեական է, որովհետեւ ջղաշունտ է մարդկութեան յաւիտենական տառապանքը եւ յաւիտենական իդէալը:

Հրէաստանը եւ Բաբելոնը ընդհարման մէջ են: Բաբելոնի քաղաքական փառքի ժամանակաշրջանն է: Նրա թագաւորները դուրս են գալիս իրենց երկրի սահմաններից եւ մեծամեծ նուաճումներ են անում: Հին ժամանակի Գերմանիան կամ Ընգլիան է նա, որ իր համար ուզում է «մի անկիւն արեւի տակ», բայց որ այդ անկիւնը հասկանում է շատ ընդարձակ չափով:

Գրուածքի մէջ դուրս է բերուած Նարուգոգոնոսորի դարը: Հին աշխարհի պատմութիւնից յայտնի է, որ Բաբելոնի թագաւոր Նարուգոգոնոսորը 7-րդ դարում, Քրիստոսից առաջ, պարսիկների աջակցութեամբ յարձակում գործեց ասորական մեծ պետութեան վրայ եւ այդ պետութիւնը իր իշխանութեան տակ առաւ: Յետոյ գնաց Եգիպտոսի վրայ, յաղթեց Եգիպտոսի փարաւոնին եւ նրա երկրի վրայ էլ տարածեց իր քաղաքական ազդեցութիւնը:

Նարուգոգոնոսորի յարձակումներից ազատ չմնաց Հրէաստանի թագաւորութիւնը: Երուսաղէմը մի քանի անգամ պաշարման ենթարկուեց, քաղաքը ծանր պայմանների մէջ ընկաւ — եւ Նարուգոգոնոսոր դարձաւ Հրէաստանի ճակատագրի տէրը: Ըյս երկրի վերջին թագաւորները — Յովակիմ, Յեքոնիա եւ Սեդեկիա — թագաւորեցին Նարուգոգոնոսորի կամքով եւ նրա հաճութեամբ:

Սեդեկիան, որ թագաւորեց 599—588 թիւր, երգում էր տուել Նարուգոգոնոսորին հաւատարիմ մնալու: Նրա թագաւորութեան ժամանակ Հրէաստանը վատալիկան դիրք ունէր եւ հարկատու էր Բաբելոնին: Ըյդ շրջանում երկիրը կատարելապէս թուլացած էր երկարատեւ եւ անյաջող պատերազմների հետեւանքով: Ժողովուրդը յոգնած էր անվերջ ընդհարումներից, խաղաղութիւն էր ուզում, ցանկանում էր երկիրը մշակել, արդիւնաբերել եւ պատերազմի վերքերը բուժել:

Բայց աղնուականները, իշխանները, բարձր կղերականութիւնը ուզում էին վատապահ ու տառապած ժողովրդին կրկին պատերազմի մէջ նետել,


դուրս գալ Բաբելոնի դէմ եւ թօթափել նրա քաղաքական լուծը: Այս պատերազմը վարելու համար նրանք փորձեցին դաշն կապել Եգիպտոսի հետ եւ ամեն կերպ հաւատադրին իրենց ժողովրդին, թէ Եգիպտոսի փարաւոնը Հրէաստանի մեծ բարեկամն է, թէ Բաբելոնի ոյժը ոչինչ է երկու քաղաքի դաշնակիցներին առջեւ:

Երեմիան, որ ապրում էր այդ ժամանակ, հասկանում էր երկրի քաղաքական եւ տնտեսական դրութիւնը, գիտէր, որ Խորայելացի դժբախտ ժողովուրդը արիւնաքամ էր արդէն, որ գիւղացին ուղում էր շունչ քաշել եւ հողը մշակել խաղաղութեամբ: Նախատեսներով երկրի եւ ժողովրդի գլխին դալիք բոլոր փորձութիւնները — սովը, ժանտախտը, գերութիւնը — Երեմիան դուրս եկաւ պատերազմական տրամադրութեան դէմ, խիստ պայքար մղեց երկրի իշխանների, զինուորականութեան եւ կղերականութեան դէմ: Բայց նրան յայտարարեցին երկրի եւ հայրենիքի թշնամի, դաւաճան, բարեւոյնին վաճառուած: Ամենատեսակ տանջանքներ եւ նեղութիւններ տուին այդ անկեղծ, գաղափարական մարդուն, սպառնացին, վերաւորեցին: Եւ երբ նկատեցին, որ Երեմիան ժողովրդի դատի համար մինչեւ կատարեալ անձնազոհութիւն կերմար — բանտարկեցին նրան միջին նկուղների մէջ, որպէս զի նա չկարողանայ իր «Թունաւոր» ազդեցութիւնը տարածել երկրում:

Եւ եգիպտական փարաւոնի վրայ յոյս դրած՝ «պառտագրական» պատերազմն սկսեցին: Պատերազմը սակայն սարսափելի եղաւ Երուսաղէմի համար: Նարուգոգոնոստի յաղթական բանակների առջեւ չդիմացան Հրէաստանի եւ Եգիպտոսի զորքերը: Եգիպտոսի փարաւոնը ժամանակին զգաց հակառակորդի ոյժը, հաշտութիւն կնքեց նրա հետ եւ դուրս եկաւ պատերազմից: Եւ այնուհետեւ ամբողջ ծանրութիւնը ընկաւ Երուսաղէմի վրայ: Երեմիան այդ շրջանում եւս ամեն ջանք թափեց, որ հաշտութիւն տեղի ունենայ: Բայց Հրէաստանի մեծամեծները եւ իշխանները չուզեցին ոչինչ հասկանալ եւ թշուառ ժողովրդին մղեցին գեղի հերոսական, յուսահատական գիմադրութիւն: Գիրքերի վրայ արիւն թափող իրենք չէին, ուստի եւ ծանր չէր բարեկական հակայ բանակների դէմ կուրծք տալ: Մեկուկէս տարի Երուսաղէմը չարքաշ ժողովուրդը արիարար գիմադրում է Նաբուգոգոնոստին, բայց վերջապէս պարտուում է եւ Երուսաղէմը դառնում է սարսափների մի դժոխային վայր:

Երեմիայի նախատեսութիւնը իր բոլոր զարհուրանքներով իրականանում է: Եւ ժողովրդական մարդարէն աղիպոյրմ ու անմիթմար ողբերով սգում է Երուսաղէմի կործանումը եւ ժողովրդի դառն գերութիւնը:

Ահաւասիկ այն հին նիւթը, որի վրայ կառուցում է Սաեֆան Եւայդ իր դրամատիքական ստեղծագործութիւնը եւ որից հիւսում է ժամանակակից ողով մի գեղարուեստական ներշնչուած երկ:



2. Դրամոն:

Մտե՛ֆան Յուայգ իր երկն անուանել է “դրամատիքական պոեմ”։ Գրութաւոր բազմացած է իննը պատկերից, որոնք դրամատիքական գործողութեան դեր ունին, որովհետեւ իւրաքանչիւր պատկեր ներկայացնում է դրամայի մի նոր զարգացում եւ ամբողջը միասին ընթանում են դէպի դրամատիքական լուծում։ Կարելի էր անշուշտ նիւթը ամփոփելով պատկերները կամ գործողութիւնները միացնել եւ զարմնել Տինգ գործողութիւն։ Խնդիրն այն չէ ի հարկէ, որ դրամատիքական գործողութեան թիւը Տինգ լինի կամ իննը։ Արտաքին, ձեւական նշանակութիւն ունին դրանք — եւ անհրաժեշտօրէն կապուած չեն դրամատիքական արուեստին։ Եթէ Տները դրամա ներկայացնելու համար գործ են ածել Տինգ կամ երեք թիւը — նորերը կարող են բացարձակապէս ուրիշ թիւ գործածել կամ մինչեւ անգամ մի ամբողջութեան մէջ ամփոփել։ Մարդկային հոգեբանութիւնը այդպիսի արհեստական սահմանափակումներ չունի։ Եւ նրա ներքին տաղանայներն արտայայտող դրաման կարող է նոյնպէս որ եւ սահմանափակում չձանաչել։

Ընկալա այս խնդրից՝ Մտե՛ֆան Յուայգի դրաման աւելի զօրաւոր կը դառնար, եթէ ծաւալի մէջ մի քիչ սեղմուէր։

Բայց խնդիրն այն է, որ Մտե՛ֆան Յուայգ գործել է ոչ միայն իրրեւ դրամատուրգ, այլ եւ իրրեւ բանաստեղծ։ Անշուշտ, մեծագոյն դրաման այն է, որ իր մէջ խոր բանաստեղծութիւն ունի։ Էէքսպիրի դրամաների մէջ ոչ միայն ուժեղ, տարերային ընդհարում կայ, այլ եւ զմայլելի բանաստեղծութիւն կայ։ Բայց քննեն ունին Էէքսպիրի արուեստը եւ շատ քննելու կարող են նրա պէս խտացնել դրաման, բանաստեղծութիւնը, փիլիսոփայութիւնը, գիտութիւնը։

Մտե՛ֆան Յուայգի դրամատիքական պոեմի մէջ երկու տարրերը — դրամա եւ բանաստեղծութիւն — յաճախ սերտ կերպով միացուած չեն միմեանց հետ, ինչ որ այդ գեղեցիկ երկասիրութեան թերութիւնն է անկասկած։ Երբեմն դրամատիքական գործողութեան ընթացքը ընդհատուած է եւ բացուած է բանաստեղծական արուեստի մի սքանչելի կէ, որ կարողացում է ինքն իր մէջ մեծագոյն հաճոյքով։

Մտե՛ֆան Յուայգ իր դրամատիքական երկի մէջ ոչ միայն գեղեցիկ բանաստեղծութիւն է գրել, այլ եւ կարողացել է ոգեկոչել հեռաւոր հնութիւնից մի պատմական խոռվայոյղ շքան, ապով նրան յախտնական պատրանք, ներկայացնելով անձերը, դասերը, ընկերութիւնը, ազգերը իրենց շարժման, անկման, բարձրացման յաւերժական ճանապարհի վրայ։

Այս յապկութիւնը գործին աուել է մի աննման կենդանի շունչ, ներկայի ուժեղ արամագրութիւն, որով գիրքը կարդացուած է ոչ միայն իրրեւ պատմական դրամատիքական պոեմ, այլ եւ իրրեւ ժամանակակից դրամա։

Եւ Մտե՛ֆան Յուայգի նպատակն էլ այդ է եղած — ներկայացնել

այսօրուան սարսափելի իրականութիւնը անցեալի զառւած, հանգարառած մեծադորդի մէջ:

—

Գրասան սկսեալ է մի պատկերով, որ հեղինակը խորագրել է «Մարգարէի զարթնումը»: Երուսաղէմի հանգարառ եւ մեղմ գիշերներէց մէկն է: Ըմբողջ քաղաքը քնած է խորին խաղաղութեան մէջ, ամենեւին չմտածելով որ այդ խաղաղութեանը վտանգ է սպառնում դաւադիրների կողմէց: Գիշերային ծանր լուսիւնան մէջ ընդոտ շարժումով եւ խռովելից արամադրութեամբ զարթնում է Երեմիան, որ քնած էր իր աղքատիկ սանր, իր ծերունի մոր հետ: Յանկարծական, պայծառ աշխրով տեսնում է նա այն ահաւոր տղեակը, որ պատրաստուում է Երուսաղէմի համար: Եւ մինչ քաղաքի իշխանները, մեծամեծները, վարիչները հանգչում են իրենց փափկասուն եւ մեղալից բնակարաններում, Երեմիան կիսամերկ եւ կուրծքը քամուն տուած տառապում է իր ծանր տեսիլների մէջ: Խաղաղութեան մարգարէն զարնուած է մինչեւ իր գոյութեան խորքը եւ ուզում է աշխարհին պատմել ահաւոր ծանրատւութիւնը, նախազգուշացնել, պատրաստել ժողովրդին, որ նա կարողանայ կռուել շարքի դէմ, աղատել Երուսաղէմը պատերազմի սարսափներից:

Երեմիայի գիշերային անհանգիստ ծիւերից արթնանում է ծերունի մայրը եւ հարցնում է, թէ ինչու է անհանգիստ դուստրը: Երեմիան պատմում է, թէ Ըստուած նրան սալսափելի ծանարտութիւններ հաղորդեց, թէ Երուսաղէմի վրայ պատերազմ է պատրաստուում, թէ պիտի լինի կործանում, սով, գերութիւն:

Մայրը, որ հին հաւատացող եւ ջերմ հայրենասէր կին է, չի կարողանում ընդունել, թէ Ըստծու քաղաքը կարող է կործանուել, թէ որ եւ է մարդկային ոյժ կարող է մեծափառ Ռիւնին վտանգ սպառնալ: Մարդկանց չար գործերը նրան յայտնի չեն եւ նրան թւում է թէ ամենքն էլ իր պէս անմեղ են, թէ Խորայելի վարիչները նուիրական անձնաւորութիւններ են: Արդու տենդագին խօսքերը թւում են նրան սրբապղծութիւն: Նա պահանջում է, որ իր դուստրը լռի, որ նա ժողովրդի մէջ չտարածային իր խելագար գողափարները եւ հաւատայ, որ Ըստծու քաղաքը յաւերժական է:

Բայց Երեմիայի ներքը ծանարտութեան հրդեհ կայ, եւ նա իր խղճատանքին միայն եւ իր աստուածային կոչմանը պիտի հետեւի: Մօր եւ որդու միջեւ սկսում է մի զարհուրելի պայքար: Ընդիտակցութիւնը եւ գիտակցութիւնը իրար են զարնում, եւ անգիտակցութիւնը հարադատ մօր բերանով անիծում է որդուն, որ կը համարձակի չար բաներ գուշակել եւ ժողովրդի «խաղաղ» կեանքը թունաւորել:

Երեմիայի համար մայրական այս անեծքը սալսափելի է: Բայց նա պիտի գնայ իր ճանապարհը, որովհետեւ ծանարտութիւնը եւ աշխարհի խաղաղութիւնը այդպէս են պահանջում:

Այսպէս: Ընդհանուր անգիտակցութեան մէջ Մարգարէն զարթնում է եւ միայնակ գնում է հոսանքի դէմ, զոհարելով այն ամենը, ինչ որ նրա համար մարդկայնօրէն հնարաւոր է:

Ստեֆան Եռայգի գրամատիքական պօէմը այսպէս է սկսում: Մէկը, հերոսը, լուսաւորում է եւ կանգնում է ամենքի դէմ: Միւսները շեն ուզում «յիմարական» մարգարէութիւններին սկանը գնել եւ ներբողում են պատերազմը, որ միայն կարող է վերջ աւել «Խրայեյի ստրկութեան»:

Երկրորդ պատկերի մէջ սկիզբ է դրուած այս երկու այժմերի տարերային ընդհարման: Ներկայացուած է Երուսաղէմի մէջ հրապարակը, որտեղ խռնուած են ժողովրդի զանազան դասակարգերը եւ արտայայտում են պատերազմի մասին: Այդտեղ է ամբօրի եւ արքունիքի պաշտօնական մարգարէն — Ընանիան: Այդտեղ են գալիս կղերականութեան ներկայացուցիչը, զինուորականութեան պարագլուխը եւ վերջապէս թագաւորը: Արանք բոլորն էլ ժողովրդին զրգուում են եւ մղում են դէպի «սրբազան պատերազմ», յայտարարելով թէ Աստուած ինքն օրհնել է զէնքը եւ պատերազմը:

Ստեֆան Եռայգ այս զորաւոր հոսանքի դէմ կանգնեցրել է անյայտ Երեմիային: Բայց ժողովրդական մարգարէն չի ընկրկում տիրող այժի առջեւ: Զարմանալի համարձակութեամբ, աստուածային այրող խօսքերով, նա դատապարտում է Երուսաղէմի վարիւններին եւ համարում է նրանց դաւադիրներ ժողովրդական խաղաղութեան դէմ: Նրան աշխատում են լուցնել ամեն կողմից, պաշտօնական մարգարէն՝ տախտա Ընանիան զրգուում է ժողովրդին Երեմիայի դէմ, ասելով թէ նա փաճառուած է բարեւոյնին, զինուորները սուրբ շողացնում են նրա վրայ, բայց Երեմիան մնում է անյողզող:

«...Նա չեմ կարող լոնել, չեմ կարող լոնել, քանի որ իմ մէջ ճշում է նրուսաղէմը: Նրուսաղէմի պատերը կանգնում են իմ սրտի մէջ եւ չեն ուզում կործանուել: Ըստայլի երկիրը ծաղկում է իմ նոզում եւ ուզում է խաղաղութիւն... Լսիր, նրուսաղէմ եւ պանիր քո զաւակներին, լսիր դու Սիօն, դու աստուածային քաղաք, եւ պանիր խաղաղութիւնը...»

Երեմիայի մտքերը շփոթութիւն են առաջ բերում ժողովրդական զանգուածների մէջ: Նրանք, որոնք եղել են միշտ անգիտակից սարուկներ երկրի մեծամեծների եւ իշխանների ձեռքին, սկսում են մտածել, թէ սուտ է այդ իշխանութիւնը եւ թէ Երեմիան Աստուած անուամբ է խօսում: Իւ ամբօրի մէջ այստեղ-այնտեղ լսում են ձայներ, որոնք արտայայտում են պատերազմի դէմ եւ խաղաղութիւն են պահանջում: Երբ ռազմասենը ձայները հարցնում են խաղաղութիւն պահանջողներից մէկին, թէ ո՞վ է նա, վերջինս պատասխանում է.

«...Մի զիւղացի եմ եւ, եւ իմ դաշտը խաղաղութեան մէջ միայն կարող է ծաղկել: Պատերազմը քարոզում է զոյթման: Նա չեմ ուզում որ եւ է պատերազմ...»

Սակայն ուժեղ է պատերազմական այիքը եւ տիրող դասերի ազդեցու-

թիւեր մեծ է աշխատաւոր զանգուածների վրայ: Պատերազմ գնալու համար նրանք պէտք է լռեցնեն Էրեմֆային, և Բարութ անունով մի երկատարդ զինուորական սրով զարկում է ժողովրդական Մարգարէին, որ նա չլանդզնի խաղաղութեան անունով խօսել և շփոթեցնել հայրենասերների մտքերը: Երիւնը թափւում է հրապարակի վրայ, բայց Մարգարէն ճակատը բարձր, աստուածային հուրը աչքերում, վազում է պատերազմ գնացողների յետեւից և աշխատում է մինչև վերջին շունչը կանգնեցնել ճակատագրական ճանապարհի վրայ:

Բանակները գնում են սակայն և արեւնահեղ պատերազմը սկսւում է: Դառնում է միայն Բարութ, որ Էրեմֆայի վրայ սուր էր բարձրացրել և որ տեսել էր Մարգարէի անդրդուելի հաւաքը և մարդկային անխորտակելի սէրը, երբ արդէն արիւնը հոսում էր նրանից: Եւ դ հաւատքը կաշկանդում է Բարութին: Նա տեսնում է, որ Էրեմֆան հաղարատատիկ աւելի քաջ է, քան պատերազմի անունից աղաղակողները, տեսնում է, որ երկշտու թիւեր չէր նրան պատերազմի դէմ կանգնեցնում, այլ ժողովրդական և մարդկային բարձր զաղափարը:

«... Կարծում ես միթէ, որ խաղաղութիւնը գործողութիւն չէ, բոլոր գործողութիւնների գործողութիւնը: Օր օրի վրայ պիտի նուաճես այն և ազատես բոլոր ստախօսների երախից և ամբոխի սրտից... Ով խաղաղութիւն է պահանջում, նա պիտի յաւիտեան կռուի մէջ զսնուի: Ես գիտեմ, որ անէծք պիտի թափեն վրաս և մահուան զիրկը պիտի նետեն ինձ, բայց դա ինձ չէ սարսափեցնում, որովհետեւ ես պարտաւոր եմ Աստուծու գործը կատարել...»

—

Պատերազմը սարսափելի է լինում Էրուսաղէմի ժողովրդի համար: Եզդիպտացիք սպասուած լռակցութիւնը չեն բերում, բարեխոյն կարծուածից աւելի զօրաւոր է յայտնում: Էրուսաղէմի իշխանները «ազատագրական» պատերազմն սկսել էին առանց հաշուի առնելու թշնամու և զաշնակցի ոյժն ու արամադրութիւնը: Բարեխոյն բանակների առջև Եզդիպտոսը վար է դնում զենքը և հաշտութիւն է կնքում: Էրուսաղէմը այնուհետև դառնում է յարձակման միակ առարկան:

Ստեփան Գուայգ այս դէպքերը առել է Երեւելքի հին պատմութիւնից, որոնց առել է սակայն դրամատիքական գոյն և զարգացում: Պատմական դէպքերը յաջորդում են միմեանց, որպէս արամաբանական հետեւութիւններ, և ներգործում են դրամայի անձերի և Էրուսաղէմի ժողովրդի հոգեբանութեան վրայ անդիմադրելի թափով:

Եւս ներգործութիւնը ամենից առաջ տեղի է ունենում բնականաբար ժողովրդական զանգուածների հոգեբանութեան վրայ: Զինուորի ներքին

աշխարհահայեացքը ենթարկուած է փոփոխութեան: Երկարատեւ ամիսների տաժանագին դիմադրութիւնից յետոյ, անկախելի զրկանքներից եւ զոհարարութիւնից յետոյ գինուորը սկսեալ է տեսնել: Նա նկատեալ է, որ պաշտարուած քաղաքում իշխող դասերը շարունակուած են ապրել սովորական կեանքով, նկատեալ է, որ նրանք մինչեւ անգամ շահագործուած են պատերազմը ժողովրդական խաւերի դէմ: Եւ նրա մարում արժնանում է այն զգացումը, թէ Բարեբնում եւս մարդիկ հաւասար չեն, թէ այնտեղ եւս պատերազմի ողջ ծանրութիւնը բնկած է այնպիսի մարդկանց վրայ, որոնք ոչինչ չունին եւ որոնք իրենց լիշտամբները չեն:

Ստեփան Եռալոյսի գրամատիքական պէտքի այս տեղերը յիշեցնում են Բոսնի Բոլանի «Ժամանակը կը գայ» գրաման, որ առնուած է անգլո-բոսնական պատերազմի դէպքերից եւ որ նոյնպէս պատերազմական շրջանի հոգեբանութիւն է արտայայտուած:

Երուսաղէմի գիւրերի վրայ հսկող գինուորները գիշեր ժամանակ խառնում են միմեանց հետ պատերազմի մասին: Կրանցից մէկն ասում է.

«... Ինչո՞ւ Աստուած նետում է ժողովուրդները միմեանց վրայ: Մի՞թէ արեւի տակ բաւական տարածութիւն չկայ ամենի համար... Ի՞նչ է ատելութիւն սերմանում ժողովուրդների միջեւ, երբ այնքան տեղ կայ ամենի կեանքի համար... Չեմ հասկանում այս... Աստուած չէ կարող ցանկալ այս ոճիրը: Պատերազմը Աստուծոց չէ գալիս...»

Եւ երբ միւս գինուորը ասում է, թէ պէտք է տեսլ բարեկեցիկներին, որովհետեւ նրանք են սկսել պատերազմը — առաջին գինուորը պատասխանում է համարձակութեամբ.

«... Այդպէս են ասում՝ Երուսաղէմում: Եւ անշուշտ միեւնոյն բանը ասում են նաեւ Բարեբնում...: Եթէ բարեկեցիկների հետ խօսենք, նշմարտութիւնը կը հասկանանք թերեւս... Ինչո՞ւ ենք սպանում նրանց եւ որի՞ն ենք ծառայութիւն անում՝ նրանց սպանելով...»

Ժողովրդական խաւերի այս անհանգիստ արամագրութիւնը սկսում է ազդել նաեւ տիրող դասերի վրայ: Բայց խնդիրն այն է, որ նրանք իրենց դասակարգային բնոյթով չեն կարող վճռական քայլ անել եւ հաշտութիւն կնքել առանց պարտութեան: Կրանք ուզում են ժողովրդական արիւնք շահագործել մինչեւ վերջին կաթիլը եւ տեղի են առիւս այն ժամանակ, երբ այլ եւս նրախան հնարաւորութիւնից զրկուած են: Ստեփան Եռալոյս այս հոգեբանութիւնը վերլուծել է իրրեւ տաղանդաւոր արուեստագէտ, կենդանօրէնամարդ գլխաւորապէս Սեդեկիա թագաւորի վրայ եւ ներկայացնելով այդ միապետի հոգեկան ամբողջ քառորդ Սեդեկիայի օրինակի մէջ նա գեղարուեստական լոյսի մէջ է դրել տիրող դասակարգերի այն հոգեբանութիւնը, որ խորապէս նշմարիտ է եւ որի համաձայն իրենց սեփական կամքով եւ բարի կամեցողութեամբ երբեք չեն զիջում նրանք:

Քաղաքը, իշխանները, քահանայապետը, զորքի հրամանատարը և մանաւանդ գրգռիչ Անանիան չեն կամենում լսել Երեմիային — և կործանարար պատերազմը շարունակում է: Երուսաղէմի վրայ ամեն տեսակ փորձութիւններ են գալիս: Քաղաքը երկարատեւ պաշարումից յետոյ սովի և հիւանդութեան ճարակ է դառնում: Զարհուրելի է մանաւանդ չքաւոր դասի վիճակը, որ Ասեֆան Եւայցի գրամատիքական պեղմի մէջ երեւան է գալիս՝ կենցաղական և պատմական միջոցառում տեսչեցեւ նպատակով: Քաղցած և կիսամերկ ժողովուրդը Երեմիայից մարգարէութիւն է խնդրում — Երեմիան սարսափելի, դաժան խօսքերով պատմում է թէ ինչ պէտք է լինի պատերազմի հետեւաները: Հարազատ մայրը, որ անէծքից յետոյ այլ ևս չէր տեսել Երեմիային, մահուան անկողնում կարօտում է զաւակին և խնդրում է, որ իր մօտ բերեն: Արդին գալիս է — և սկսում է մօր ու որդու միջեւ սիրոյ և գորովանքի մի զարմանալի տեսարան:

Հիւանդ և մերձիմահ մայրը ոչինչ չգիտէ Երուսաղէմի դժուար կացութեան մասին: Արդուց խնդրում է բարի տեղեկութիւն, որ կարողանայ հանգիստ մեռնել: Բայց որդին միաժամանակ ճշմարտութեան դաժան մարգարէն է: Չի կարողանում թաքցնել մօրից ինչ որ պիտի գայ Երուսաղէմի վրայ: Մայրը մեռնում է ահաւոր տանջանքներով: Քաղաքի անյոյս կացութիւնը, ժողովրդի ամենօրեայ զոհաբերութիւնը, սովը, հիւանդութիւնը և վերջապէս իր սիրելի մօր սարսափելի մահը անօրինակ տրագեդիա են տեսչեցեւ Երեմիայի հոգում: Երուսաղէմը բնկնում է ծանր աղէտներով: Երեմիան չի կարողանում տեսնել մարդկային տղքան մեծ դժբախտութիւնը — և ըմբոստանում է Ասածու դէմ: Արեւելիցիք և դաժան Աստուածը նրա բերանով մահ է դուշակել Երուսաղէմի համար և ծիծաղել է մարդկանց տանջանքների վրայ, բայց Երեմիան սիրում է իր եղբայրներին, նա չի կարող այդ դժոխային աղէտից յետոյ այլ ևս Ասածուն սիրել և գնալ նրա ճանապարհով:

«... Չեմ կարող ծիծաղել, Աստուած, չեմ կարող ծիծաղել իմ եղբայրների տառապանքների վրայ: Չեմ կարող անել այն, ինչ որ դու արիր... Չեմ կարող այլ ևս ծառայել քո կատաղի վրէժխնդրութեան: Պատուում եմ ևս այն օղակը, որ կապում է ինձ քեզ հետ...»

Եւ յետոյ խոռվալոյզ հոգով և մարդկային ամենաբուռն սիրով բացականչում է. —

«... Ինձ կանչում է Երուսաղէմը, որ դու անխնայօրէն հրդեհեցիր, ինձ կանչում է քո ժողովուրդը, որին դու ատելութեամբ ոչնչացրիր, ինձ կանչում են այրիները, կանչում են մայրերը, որոնց դու խորտակեցիր...»

Սիրոս շրջում է քեզանից և գնում է դէպի իմ քոյրերը և եղբայրները...

Ան քեզ ասում եմ, Աստուած, եւ սիրում եմ միայն նրանց...

Եւ այն ժամին, երբ յաղթական, գոռոզ Նարեկազոնոստրի զեապանները մտնում են Երեմիայի մօտ եւ իրենց աշխարհակալ տիրոջ շնորհն ու հրաւերը հաղորդում խմաստունին յայտնելով, որ Բաբելոնի տերը ուզում է նրան իր խմաստունների պարագլուխը դարձնել — Երեմիան հերոսական համարձակութեամբ յետ է մղում նրանց եւ անարգում է նրանց միապետի իշխանութիւնը։

“...Այսպէս ասացէջ Նարեկազոնոստրին! Իմ դառնութիւնը ոչ մի քաղցրութիւն չունի քեզ համար... Թէեւ դու ինձ պատում ես, բայց ես քեզ անարգում եմ, Թէեւ դու ինձ որոնում ես, բայց ես քեզ չեմ ուզում զտնել...”

Եւ եթէ նրուսաղէմի քարերի շտիով ոսկի կշռես դու, իմ բերանը քեզ քաղցրութիւն չի խօսի...

Փռչի է նրա իշխանութիւնը եւ նրա բարկութիւնը քամի...

Նա ստրկացրեց նրուսաղէմը, բայց եօթնասպատիկ անլի պիտի ստրկանայ ինքը...

Բաբելական աշխարհակալի զեապանները, որ հաւատում էին խմաստունի ոյժին, սարսափահար ժախջում են Երեմիայի մօտից։ Երեմիան մնում է ժողովրդի հետ, տանում է նրա բոլոր տառապանքները, բռնում է նրա հետ միասին գերութեան ճամբան, միխիմարում, յոյս է ներշնչում ամենին եւ պահանջում է, որ ոչ ոք չընկճուի այս ծանր աղէտների մէջ։ Որովհետեւ անյաղթելի է ժողովրդի ոգին։ Որովհետեւ հօւրի եւ սուրի միջից գնում են նրանք գէպի նոր աշխարհ եւ նոր ժամանակներ...



Մտեման Յուսայգի գրամայի մէջ դուրս բերուած անձերը, վերցրած հեռաւոր անցեալից, մշտապէս կենդանի մարդիկ են։ Նրանք պատմականորէն ճշմարիտ են եւ հոգեբանորէն իրական ոչ միայն հինգերորդ եւրուսաղէմի, այլ եւ մեր զժառիտ ժամանակի համար։ Քիչ գրուածքներ կան, որոնք պատմական անցեալի կեանքը հարազատորէն վերաբառադրելով հանգերձ, ունենան այս աստիճան յուզիչ այժմեականութիւն։ Երբ կարգում էք “Երեմիան” — դուք կատարելապէս ապրում էք պատմական անցեալ միմեջորդի մէջ։ Ոճը, գրութեան ձեւը, արտայայտութեան մանրամասները, բնորոշ պատկերները, գէպերը խորին հնութիւն են ներկայացնում։

Բայց դուք այդ անցեալ միմեջորդի մէջ ստան տաքկայականութիւն եւ “մասյլ անհետաքրքրականութիւն” չէք կարողանում պահպանել, որովհետեւ այդ անցեալը յաւերժօրէն կենդանի է։ Դուք կարգում էք ոչ թէ պատմութիւն, այլ գեղարուեստական ստեղծագործութիւն։ Դուք տեսնում էք ոչ թէ անյոյզ գիտնականի գէմքը, այլ ներշնչուած եւ թրթռուն արուեստագէտի բարդական կերպարանքը, որ շարժում է կեանքը, անձերը, պրօբլեմները։

Գրուածքի մէջ դուք տեսնում էք Երեմիայի յախտնական առեղծուածք, ժողովրդական մարգարէն, որ խիզախօրէն գնում է յոսանքի դէմ, որ ծառայում է տիրող դասերի դաւաղութեան, եսասիրութեան, չարութեան կազմակերպուած ոյժի դէմ: Երեմիան բոլոր ժամանակների գաղափարական գէմքն է, աղքատ եւ շարքաշ, անխնայ եւ անհանգիստ, որ ապրում է միայն հաւաքականութեան համար: Նրան հալածում են երկրի մեծամեծները, ամեն տեսակի շահագործողները: Նրա դէմ է թագաւորը, դերաժօրը, քահանայապետը, պաշտօնական սուս մարգարէն, որ պղծ է իր բարոյական ունեւթիւնը նրա դէմ եւ ատում է նրան ամբողջ գոյութեամբ: Երեմիան այն անշահանդիւր ժողովրդաւորն ու անկեղծ հայրենասէրն է, որ պատերազմ չի ուզում միւս ազգերի դէմ, որ սիրում եւ յարգում է միւս ժողովուրդներին եւ որ մարդկութիւնը բմբռնում է իրրեւ մի միջազգային եղբայրութիւն: Եւ Երեմիային ատում են այդ պատճառով սուս հայրենասէրները, շահանդիւր ու եսասէր-ազգասէրները, զրպարտում են, բանտարկում են, զարկում են սրով եւ ծարաւ են նրա արեան: Երեմիայի շուրջը այնպիսի թունաւոր մթնոլորդ են ստեղծում, որ անգամ նրա հարազատ մայրը երես է դարձնում նրանից, անիծում է նրան, արտաքսում է անից, մարգարէի հոգին պատառ-պատառ անելով: Եւ շուրջը բոլոր այդ անկարելի տառապանքներին, Երեմիան հաւաքականութեան հետ է, ապրում է նրա ամբողջական գոյութեամբ եւ մեռնում է նրա համար: Երեմիայի դէմ կանգնած են տիրող դասերը եւ նրանց պաշտօնական սուս մարգարէն — Ենանիան:

Ենանիան յախտնական տիպ է: Հայրենիքի եւ ժողովրդի անունից խոսելով՝ նա իր հայրենիքը եւ ժողովուրդը առաջնորդում է դէպի կործանում: Նա տիրող դասերի վարձուած մտաւորականն է, որ աշխատում է դատակարարային ամենանեղ հոգեբանութիւնը եւ դատակարարային եսամոլ քաղաքականութիւնը աշխատաւոր ժողովրդի վրայ դնել: Նա մարդասէր չէ, բայց նա նոյնպէս բնաւ հայրենասէր եւս չէ: Եղնութեանութեան, զինուորականութեան եւ կղերականութեան գործիքն է նա — եւ իրրեւ գործիք խաբդակ է եւ շար: Սուրի շաշիւնի առջեւ նա պար է գալիս եւ պոռում է «Խորայէր ամենից վեր», բայց Խորայէր ասելով նա հասկանում է զոյա՛վոր, աղուական եւ կղերական: Ժողովուրդը նրա համար նպատակ չէ եւ նա իրապէս թշնամի է ժողովրդական զանգուածներին: Բայց կարողանում է խաբդախտութեամբ եւ նենգութեամբ այդ ժողովրդական զանգուածներին թունաւորել՝ շահագործելով նրանց հաւատքը եւ հայրենասիրական զգացումը: Ենանիան չի թողնում, որ ուրիշը խոսի հայրենասիրութեան անունից, որովհետեւ հայրենասիրութիւնը նրա մենավաճառքն է եւ որովհետեւ հայրենիքը եւ ազգը նա իր սեփականութիւնն է համարում: Նրանք, որոնք պաշտպանում են ժողովրդի իրական շահը եւ հայրենիքը փրկելու ծանր մտահոգութեամբ դուրս են գալիս պատերազմի դէմ՝ Ենանիայի համար նրանք հայրենիքի դաւաճաններ են:

Այս սոցիալական հոգերանութիւնը պատերազմի ընթացքում ահաւոր շարիքներ առաջացրեց: Դա գոյութիւն ունի ամեն տեղ, որտեղ ամենափոքր շարիքով իսկ դատակարգային հակամարտութիւն գոյութիւն ունի: Դա կայ հզորների մէջ, բայց նա կայ նաեւ այնպիսի փոքր ժողովուրդների մէջ, որոնք հազիւ են կարողանում իրենց ֆիզիքական գոյութիւնը պահպանել: Իրրեւ հոգերանութիւն նա դարձանայի կերպով ընդհանուր է:

Ստեփան Եւալյգի դրաման ներկայացնում է Երեմիայի եւ Անանիայի ծակաստղրական ընդհարումը: Այս ընդհարումը անհատական եւ սոցիալական հոգերանութեան տեսակետով խորապէս հետաքրքրական է եւ մշտնադատելա մարդկային է: Դա կապուած չէ միայն պատմական այս կամ այն նեղ ժամանակի հետ եւ այս կամ այն անձուկ վայրին: Դա գործում էր հին շրջապատում, գործում էր այնուհետեւ յոյս դարաշրջաններում, գործեց նաեւ մեր ժամանակ այնքան եղբրական կերպով:

Ստեփան Եւալյգ այդ մեծ ընդհարումը ներկայացրել է ոչ որպէս ընկերարան, այլ որպէս գեղարուեստագէտ: Բայց որովհետեւ արուեստը անընտան չէ կենսից եւ ընկերութիւնից, նրա դրաման ինքնին դրամա է նաեւ սոցիալական հոգերանութեան:

Այդ դրամայի մէջ Ստեփան Եւալյգ ներկայացնում է մեր դարի մաշլլ հոգերանութիւնը: Կենսիքը նրան պատկերանում է որպէս ծանր տագնապների մի անհատում շարք: Բարոյականութիւնը, մարդկայնութիւնը, աշխատանքը, արդարութիւնը սարսափելի կերպով հարուած են կրում կենանքի դժուարին ճանապարհի վրայ: Երեմիայի պէս արդար մարդիկ հալածուած են ամենադաժան կերպով եւ Երուսաղէմի պէս ամենը քաղաքը կործանուած է իր տէրերի յանցանքի հետեւանքով: Եւ ժողովուրդը, նրա աշխատաւոր եւ ստեղծագործող ժողովուրդը դուրս է քշւում իր աներից եւ անօրինակ սարսափների մէջ բռնում է գերութեան հեռաւոր ճամբան:

Սակայն այս ամբողջ տրագեդիայի մէջ Ստեփան Եւալյգ մնում է խորապէս հաւատացող՝ սպագային եւ հաւարականութեան ոյժին: Բարեկրնի աշխարհակարը կարող է Երուսաղէմի ժողովուրդին յաղթել պատերազմի դաշտի վրայ, բայց նա չէ կարող սպանել ժողովրդական ոգին, որ անյաղթելի է: Երեմիան, որ պայքարել էր պատերազմի դէմ եւ որ ժողովրդական զանգուածների դատը պաշտպանելով՝ մենակ դուրս էր եկել Երուսաղէմի ներքին վարիչների դէմ, չէր կարող ընդունել գոռող յաղթողի շնորհները: Իր պայքարի մէջ նա մղուել էր մարդկային բարձր գգացմունքներից եւ ժողովրդական զանգուածների շահից: Դա քաղաքականութիւն չէր այլ, որպէս զի հաշտուի Երուսաղէմի անարգ յաղթողի հետ եւ նրա ուղիով ընթանայ: Ժողովուրդը իր ճամբան ունի, որ կապուած չէ ոչ ներքին եւ ոչ արտաքին տէրերի հետ: Եւ Երուսաղէմի զարհուրելի կործանման ժամին անգամ այդ ճանապարհը չէ մոռացւում: Դա ինչ հաւարականութիւնը սպրում է եւ շնչւում է այդ գաղափարով: Բռնութեան շղթաների մէջ նա չէ յուսահատ-

ւում, չէ կորցնում իր հաւաքական կամքը եւ բռնում է գերութեան ճամբան հոգեկան անասման խաղաղութեամբ, գրեթէ ժպիտով, հաւատալով որ իր բարոյական ոյժի առջեւ պէտք է վերջի վերջոյ ոչնչանայ շղթան եւ պատերազմը:

Յաղթուած ժողովուրդը գնում է դէպի նոր նպատակ, դէպի յաւիտենական մամբան:

Այս յաւիտենական ճամբան բաւական միտիք ձեւով է ներկայանում Ստեփան Եւայգի գրամայի մէջ: Պատերազմը ոչնչացնելու իրական եւ միակ բանաւոր միջոցը — աշխատաւոր ժողովուրդների գրոհը հարստահարող եւ ռազմասէր դասակարգերի դէմ — Եւայգի երկի մէջ տարտամ եւ անորոշ է արտայայտուած:

Ինչ էլ որ լինի սակայն, Ստեփան Եւայգի գրամատիքական բանաստեղծութիւնը, գրուած եւ հրատարակուած պատերազմի սարսափելի տարիներում, գերման գրականութեան մէջ մարդկայնութեան եւ միջազգային խաղաղութեան իդէալներն էր տարածում եւ ուժեղ պայքար էր մղում ազգայնական պատերազմի դէմ:

Իր այդ մարդկային շունչով եւ իր գեղարուեստական կարեւոր արժէքով՝ Ստեփան Եւայգի գրամատիքական ստեղծագործութիւնը կը մնայ ժամանակակից գրականութեան մէջ, որպէս միջազգային եղբայրութեան մի ինքնատիպ արտայայտութիւն:



ԱՆԴՐԷԱՍ ԼԱՅԿՈ

"MENSCHEN IM KRIEG,,

I.

Անդրէաս Լացկոն այն միջազգային գրագէտներից է, որոնք ծնունդին պատերազմի զարհուրելի թուականին եւ իրենց ամբողջ բարոյական, գաղափարական ոյժով պաշտպանեցին ռանսհարուած մարդու իրաւունքները:

Հանրի Բարբիւսից յետոյ Անդրէաս Լացկոն երեւաց եւրոպական գրականութեան մէջ որպէս նոր հոգեբանութեան վիպասան եւ որպէս նոր զգացումների վերլուծող:

Այս նոր հոգեբանութիւնը եւ այս նոր զգացումները երեւացել էին պատերազմի ընթացքում: Ղէպքերի ամենօրեայ ազդեցութեան ներքոյ:

1915 թուականի մարդը այլ եւս այն չէր, ինչ որ էր 1914 թուականի խեղճորոյս մթնոլորտում: Պատերազմի սկզբում մարդկանց պատել էր «Նայրնհաւիական» մթութիւնը: Պատերազմի ընթացքում նրանք հետզհետէ լուսաւորոււմ են եւ աշխարհի կործանման մէջ երեւում է մի նոր գիտակցութիւն նրանց տառապած հոգում:

Անդրէաս Լացկոն իր գրականութեան մէջ ներկայացնում է մարդկային հոգու այս ներքին տազնապը, այս պատմական յեղաշրջումը, որով մարդս անգիտակից մերենայի վիճակից կամաց-կամաց վերստանում է իր աստուածային պատկերը: Եւ դրամատիքական պատերազմի ողորմելի գործիքը դառնում է ազատագրուած, գիտակից, մարդասէր ոգի:

Անդրէաս Լացկոն հունգարացի նախկին սպայ է եղել, մասնակցել է եւրոպական պատերազմին Հանրի Բարբիւսի նման, վիրաւորուել է իտալական ռազմաճակատում, տեսել, զգացել է պատերազմական կեանքը իր բոլոր էութեամբ — եւ Հանրի Բարբիւսի նման բռնել է հոգեկան եւ բարոյական կատարելագործութեան միակ ճանապարհը:

Անդրէաս Լացկո «Նայրնհաւեր» ղինուորից զարձել է միջազգային եղբայրութեան դրօշակակիր եւ պատերազմական շարքերից հեռանալով դուրս է եկել պատերազմի գէմ: Նրա գրականութիւնը մի ազդակող բողոք է դրամատիքական պատերազմի գէմ: Մի բողոք, որ բղիւսում է սարսափելի իրականութեան անձնական ծանօթութիւնից եւ այն սօցիալական հոգեբանութիւնից, որի մէջ ապրել էր այնքան բուռն կերպով:

Անդրէաս Լացկո գրականութեան վերադառնալով անդիմադրելի պահանջ էլ եւ գեղարուեստական պարտականութիւն է զգում ներկայացնելու այն մարդկանց ողորդական ճակատագիրը, որոնց հետ նա ապրել է զարհուրելի պայմաններում եւ որոնց նա սիրում է որպէս մարդ եւ որպէս ընկեր:

Անգրէաս լացկօի գիրքը՝ „Menschen im Krieg“ — „Մարդիկ պատերազմի մէջ“ — լոյս է տեսել 1917 թուականին Զիւրիխում, եւրոպական գրքերի այն ծանօթ մատենադարանի շարքում, որի մէջ երեւալացին Ռումէն Ռուան, Հանրի Բարբիւս, Հերբերտ Ուելս, Լէօնհարդ Ֆրանկ եւ ուրիշները:

Գիրքը մէկ ամբողջական վէպ չէ, ինչպէս է Հանրի Բարբիւսի „Արակը,“ այլ ժողովածու է վեց պատմուածքների, որոնք վերլուծում են պատերազմի մէջ գտնուող մարդկանց հոգեբանութիւնը, պատերազմի տարբեր շրջաններում:

1917 թուականը Գերմանիայի եւ Աւստրիայի համար դեռ պատերազմական յաղթութեան եւ խելագարութեան թուական էր Տիրող դասակարգերի իշխանութիւնը տարածուած էր ոչ միայն Գերմանական եւ Աւստրո-Հունգարական երկրամասերում, այլ եւ անցած էր Բելգիա, Սերբիա, Ռումանիա, Լեհաստան եւ դարձեալ շատ հեռու: Անգրէաս լացկօ իր գրականութեամբ դուրս եկաւ այսպիսի ծանր պայմանների մէջ, խորին հաւատք ու գիտակցութիւն ունենալով, որ „կրկայ վերջապէս մի ժամանակ, երբ քոլորը կը մտածեն այնպէս, ինչպէս ես:“

Երբ եւրոպական պատերազմից յետոյ, 1919 թուին, Հունգարիայում խորհրդային իշխանութիւն է հաստատուում — Անգրէաս լացկօի միջազգային եղբայրութեան եւ ժողովուրդների հաշտութեան իդէալներով տագործուած գրականութիւնը գնահատութեան է արժանանում: Աշխատասիրական իշխանութիւնը նրա մէջ տեսնում է մի բարոյական ոյժ, որ կարող էր զեր կատարել Հունգարիայի եւ իր գրացի ժողովուրդների միջեւ խաղաղութիւնը վերահաստատելու գործում:

Բայց այս իշխանութիւնը կարճ տեւեց Հունգարիայում: Եւրոպական գրամատիրական մեծ պետութիւնները — յաղթական Համաձայնութիւնը — չէին կարող թողլ տալ, որ Եւրոպայի կենտրոնում զարգանայ յեղափոխական Ռուսաստանի մի օրինակը:

Ժողովուրդների միջազգային եղբայրութիւնը աւելորդ եւ փնասակար գաղափար էր պատերազմների մէջ գոռոզացած Համաձայնութեան համար: Բայց զրա փոխարէն՝ շահագործող դասերը կարող էին իրար հետ միանալ՝ աշխատասիրական իշխանութեան վերջ տալու համար: Եւ համաձայնական կապիտալիստների ու հունգարական ֆեոդալների օրտազին գործակցութեան գրոհի տակ ընկաւ Հունգարիայի Յեղափոխութիւնը:

Անգրէաս լացկօի համար այս անկումը ճակատագրական հետեւանքներ պիտի ունենար: Հսկա-յեղափոխական կառավարութիւնը ձերբակալում է նրան եւ ուղւում է դէպի կառաւիմարան ուղարկել, ընայնով որ գրագետը իր գաղափարներից եւ իդէալներից դուրս որեւէ „յանցանք“ չունէր: Բայց միջազգային գրագէտի բանտարկութիւնը եւ նրան սպառնացող վտանգը դառնում է եւրոպական խնդիր: Միւս երկիրներից միահամուռ բողոքի

և ցասութի ձայներ են լսուի, որոնց առջև տեղի է տալիս աւատական կառավարութիւնը, և փրկուի է Հունգարիայի ամենաժողովրդական հեղինակի կեանքը:

Այսպէս գիտար է եղել դուրս գալ զրամատիրական պատերազմի դէմ, նախատեսնել որ այդ պատերազմը պիտի բերի սօցիալական յեղափոխութիւն, լինել մանաւանդ բարեկամ այն դառնացած և շահագործուած աշխատաւորների, որոնք զոհն են զրամատիրական դասերի և որոնք մի օր պէտք է իրականացնէին այդ յեղափոխութիւնը:

Սակայն Ընդդէմս Լացկօն կատարել է իր գրական-գեղարուեստական պարտականութիւնը: Նա տեսել է գժոխային պատերազմը, ապրել է այդ պատերազմի բոլոր սարսափները, ուսումնասիրել է անձերը, դէպքերը, հոգեբանութիւնը, և իր հայեացքը կեանքի և աշխարհի վրայ դրել է իր պատմուածքների մէջ: Այս պատմուածքները լի են ուժեղ զգացումներով, մեծամեծ կրքերով և մեծամեծ ոգրերգութիւններով: Ընդդէմս Լացկօն Լէւն-հարդ Գրանկի նման հանգարտ պատմող չէ: Նա կուտուի է, պայքարում է, բորբոքում է մի ներքին կրակից և ապրում է տանջանքներով իր նիւթի և իր ներկայացրած անձերի հետ:

Այս ուժեղ խառնուածքով միասին Ընդդէմս Լացկօն թափանցող հոգեբան է: Այրող զգացումը և դառնացած հոգին չեն խանգարում, որ նա խորանայ իր նիւթի մէջ և այնպիսի ներքին, հոգեբանական վերլուծումներ տայ, որոնք պատկերացնում են ոչ միայն Մարդիկ Պատերազմի մէջ, այլ և մարդը առհասարակ:

II.

Ընդդէմս Լացկօի գիրքը վեց պատմուածքների ժողովածու է, որոնցից իւրաքանչիւրը ներկայացնում է մի ամբողջութիւն, բայց որոնք բոլորն էլ մի ընդհանուր կազմով միացած են միմեանց հետ: Նրանք բոլորն էլ պատերազմի կեանքից են առնուած և ներկայացնում են նրա տարբեր շրջանները: Երեք վայրկեան առանձնանում են այդ քառսի մէջ — Մեկնումը, Յաղթութիւնը, Վերադարձը — ուստի և մեր կանգ կանենք այն պատմուածքների վրայ, որ արտայայտում են այդ կարեւոր վայրկեանները — “Der Abmarsch”, “Der Sieger”, “Heimkehr”:

Առաջին պատմուածքի գործողութիւնը անցնում է հունգարական մի փոքրիկ քաղաքի հիւանդանոցում: Քաղաքը գտնուի է իտալական ռազմա-ճակատից ոչ այնքան հեռու, այնտեղ յաճախ լսուի են հեռուոր թմրա-

նօթիների որոշումները, բայց ընդհանրապէս հանգիստ է, խաղաղ է, երբեմն կատարելապէս լուռ է: Այդ հիւանդանոցում բժշկւում են պատերազմի վիրաւորները:

Պատմուածքի հերոսները մտաւորական մարդիկ են, որոնց մէջ մէկը՝ փիլիսոփայութեան դասաւանդ, որին համառօտաբար անուանում են «փիլիսոփայ» եւ միւսը՝ երաժիշտ-ստեղծագործող: Երկուսն էլ անողոր եւ անբութենէի պատերազմի հետեւանքով դուրս են քշուած իրենց կուլտուրական աշխատանքի վայրից եւ նետուած են դէպի արիւնահեղ դաշտը:

Պատերազմը երկուսի վրայ էլ խորին ազդեցութիւն է ունեցել, որոնք յօշոտուած են արդէն ֆիզիքապէս եւ մանաւանդ բարոյապէս:

Յաճախ հիւանդանոցն է գալիս բարձր աստիճանի պատկանող մի տիկին, որ պատերազմի ընթացքում զարնել է «գլխութեան քոյր», որ իբր խնամում է հիւանդներին, բայց աւելի շատ շաղկապաւում է վիրաւորների շրջանում պատերազմի եւ նրա հետ կապուած երեւոյթների շուրջը: Թիկունքի «հայրենասիրական» հասարակութեան հաւատարիմ պատկերն է այս տիկինը, որ բարոյապէս պատերազմի ստեղծողների մէջ է եւ որ շահագործում է պատերազմը իւրատեսակ ձեւով, մարդասերի եւ բարեգործուհու անուն իւրացնելով:

Հիւանդների մէջ առանձնապէս ծանր է երաժշտագէտի կացութիւնը, որ տանջւում է նեարդային խանգարման հետեւանքով: Սիրել է նա արուեստը, որին նուիրուած է եղել իր բոլոր էութեամբ, սիրել է իր երիտասարդ, գեղեցիկ կնոջը, որ նրա համար եղել է որպէս պսակաւորում՝ արուեստի եւ կեանքի: Եւ ահա այս երիտասարդ եւ գեղեցիկ կինը՝ երկար, ահաւոր օրերի բացակայութիւնից յետոյ, տեսութեան պիտի գայ իր սիրելի ամուսնուն: Այս հանդիպումը լցնում է կնոջ սիրտը անօրինակ յուզմունքով: Հեւքով եւ գոգով մտնելով է նա ամուսնուն, բայց վերջինս չի կարողանում այլեւս նրան դիմաւորել հարազատի պէս, որովհետեւ կինը այլ եւս օտար է նրան: Ինչու: Որովհետեւ նրանց միջեւ անցել է դժոխային պատերազմը:

Մեկնումի վայրկեանը երաժշտագէտի համար եղել է մի վայրկեան, որ հանում է նրան կեանքից, սիրուց, բարեկամութիւնից եւ նետում է նրան ոչնչութեան գիրկը: Արուեստագէտը չի կարողանում մոռանալ այդ անսպասելի վայրկեանը, որովհետեւ նա աւելի անզգայ, աւելի անսիրտ է եղել, քան պատերազմը —

«... Ամենասարսափելին եղել է յուսախաբութիւնը, հիասթափութիւնը, մեկնումը: Պատերազմը ոչինչ: Պատերազմը եղել է այն, ինչ որ պիտի լինէր: Սակայն անակնկալը եղել է մեկնումը: Անակնկալը եղել է այն, որ կանայք այդքան խստասիրտ են եղել, որ նրանք կարող էին խնդալ եւ վարդեր նետել, որ նրանք կա-

րող էին պատերազմին յանձնել իրենց ամուսինները, զաւակները, իրենց սիրասուն փոքրիկները, որոնց չազար անգամ անկողին են դրել, խնամել, զուրգուրացել: Անաւասիկ անակնկալը: Նրանք արել են այս, որովհետեւ կամեցել են ունենալ իրենց հերոսը: Նրանք են մեզ պատերազմի դաշտը ուղարկել: Ոչ մի զօրավար չէր կարող ոչինչ անել, եթէ մեր կանայք մեզ զնացք չնստեցնէին, եթէ նրանք ճշային, թէ այլ եւս չեն կարող մեզ տեսնել՝ եթէ մենք մարդասպաններ դառնանք... Ես չէի կարող երեւակայել, թէ կանայք այսպէս կը լինէին:— Ես սպասում էի միշտ, որ երբ շոգեկառքը շարժուի, նրանք ծիչեր կարծակեն, կը յարձակունն զնացքի վրայ, կը խլեն մեզ վագոններից, կազատեն մեզ վերջնապէս...

Բայց „Հայրենասիրական“ ոգեւորութիւնը եւ պատերազմական տենչը տարածուած էր մինչեւ իսկ ամենազգայուն էակների վրայ: Դրամատիրական գասակարգերը իրենց Նուաճողական գործողութիւններին հաղորդել էին բարձր բարոյական կերպարանք եւ մոլորեցրել անգիտակից զանգուածները: Կինը եւ մայրը պատերազմի օրերում մեռած էին ընդհանուր քասօի մէջ եւ մի ողբալի հակասութեամբ ծառայում էին տիրող կարգերին: Եւ այդ կարգերի մէջ ո՞նչանում էր մի ամբողջ մարդկութիւն, այլասերում էին տիրոյ, բարեկամութեան, եղբայրութեան զգացումները:

Անգրէաս Լացկօի հերոսներին — երաժշտագէտին, փիլիսոփային — մարդկութեան այս այլասերումը բնորոշ կերպով երեւացել էր Մեկնումի ճակատագրական օրը, երբ մայրը եւ կինը մի անողջելի „Հայրենասիրութեամբ“, վարդերով ու խնդալով, ճանապարհ էին գրել իրենց մտերիներին դէպի համատարած դժոխքը:

Յակոբն այս բեկումը հոգեբանութեան եւ մտածողութեան մէջ՝ առաջացել էր պատերազմի ընթացքում: Եւ այն, ինչ որ 1914 թուականի Օգոստոսի 1-ին երեւացել էր որպէս Հայրենասիրական պարտականութիւն, հետզհետեւ լուսաւորուել էր, ստացել էր իր գոյնը եւ խեղդում էր արթնացող մտաւորականին,

Եւս հոգեբանութիւնը մեր ժամանակի մտաւորականութեան համար հիմնական երեւոյթ է: Նա սկսուել է դէպքերի ազդեցութեան տակ եւ շարունակուում մինչեւ հիմա, անասելի տանջանքներ եւ բարոյական ծանր տագնապներ հաղորդելով վերլուծող, խորհող մտաւորականին:

Հունգարական փոլրիկ քաղաքի հիւանդանոցը, ուր երաժշտագէտն ու փիլիսոփան տառապագին գիշերներ են անցկացնում, կղզիացած ու բացառիկ վայր չէր: Նա բոլոր տեղերի սիմբոլական օրինակն էր:

Աշխարհի բոլոր կողմերում մաքերի մէջ նոյն շփոթութիւնն էր ընկել, նոյն տագնապը, նոյն ընդհարումը: Բայց այդ շփոթութիւնը տակաւին կամք

եւ գիտակցութիւն չէր դարձել: Նա անասելի ցաւ էր պատճառում, ասիստանք՝ եղածի համար, զղում եւ ապաշաւանք: Նա դառնացնում էր հոգիները այն ճնշումով, թէ իրենց գործը հերոսութիւն չէ, ոչ էլ հայրենասիրութիւն, թէ իրենք անմիտ, անգիտակից եւ անփառունակ գործիքներ են եղած մի սարսափելի խարդախ ու ետական ոյժի ձեռքին, որ իր շահի համար ոչնչացնում էր քաղաքակրթութիւնը եւ մարդկութիւնը:

Անդրէաս Լացկօի պատմուածքը այս արժեանքող մտաւորականի յուզուած եւ զարնուած հոգու արտայայտութիւնն է:

III.

Պատերազմի ժամանակ, մանաւանդ նրա սկզբնական շրջանում, շատ ջորաւոր էր յաղթութեան հոգեբանութիւնը: Մարդիկ այդ շրջանում ապրում էին յաղթութեան մոգական ոյժով — եւ չէին կամենում տարբեր զգացումներ եւ տարբեր մտածումներ տեսնել: Սկսւած թիւ էին այն պայծառատես ոգիները, որոնք ժողովրդների այս զօժակային բաղնուկի մէջ ուրիշ եւք եւ ուրիշ իմաստութիւն էին որոնում, քան էր յաղթութեան այդ էապէս բիրտ եւ անմարդկային ըմբռնումը: Որովհետեւ յաղթութիւն նշանակում էր այդ արիւնահեղ կատաստրոֆի երկարատեւ շարունակութիւնը, նշանակում էր ժողովուրդները ոչնչացնել թնդանթների անվերջանալի կրակի տակ եւ մարդկութիւնը տանել դէպի տնտեսական եւ բարոյական կազմալուծում: Բայց տիրող դասակարգերը շատ չէին տանջուում մարդկային եւ քաղաքական այս ողբերգական պրօբլէմի առջեւ, չէին մտահոգում այն մասին, որ Եւրոպայի լայնարձակ դաշտերից դէպի վեր էր բարձրանում միլիոնաւոր մարդկանց արեան բոյրը: Հայրենիքը, այդ դրժբախտ եւ անյայտ երկիրը դարձել էր քաւութեան նոխադ, որի անունով կատարւում էին զարհուրելի ոճիրներ, անհամեմատ աւելի զարհուրելի, քան մի ժամանակ կատարուել էին քրիստոնէութեան, կրօնի անունով:

Այս հասարակարգի մէջ կենդանական գիրք էր ստացել այն մարդը, որ պատերազմ էր վարում եւ որ յաղթութիւններ էր տանում: Ռազմականութիւնը դարձել էր առաջին սկզբունքը եւ զինուորականի տիպը գերիշխում էլ բոլորի վրայ:

Անդրէաս Լացկօն իր պատմուածքների մէջ դուրս է բերել այս համատարած տիպը, յաղթողի, հայրենասէրի, հերոսի հոգեբանութիւնը, որով ապրում էր տիրող դասը եւ որի պաշտամունքով խեղդում էր ժողովրդական զանգուածների գիտակցութիւնը: “Հերոսի”, այս հոգեբանութիւնը Անդրէաս Լացկօն տուել է մեզ այնպիսի գծերով եւ այնպիսի մուսլ ճշտութեամբ, որի առջեւ բարոյական սարսափ կարելի է զգալ: Նրա վեր-

լուծական միտքը բաց է անում մեր առջեւ մի մարդու հոգի, որ ատում է մարդկութիւնը, բայց որ մի անհնարին հակասութեամբ մեր անիրաւ եւ անգիտակից աշխարհի մէջ, հին աշխարհի մէջ, հերոսի ազնիւ ու քաջ անուն ունի:

Այդ հերոսը զօրքերի վերին հրամանատար է: Նրա ղեկավարութեան տակ կուում է մի ամբողջ բանակ, երիտասարդ եւ աշխատաւոր մարդկանց մի անձնագոհ բազմութիւն, որ թողել է կեանքը, աշխատանքը եւ որ պաշտպանում է «հայրենիքը», Հրամանատարը ապրում է ծոխ եւ հանգիստ՝ պատերազմական վտանգաւոր գործողութիւններից հեռու, մի քաղաքում, որ սպայակոյտի կայանն է — եւ ուր նա կարողանում է ճաշակել կեանքի բոլոր քաղցրութիւնները: Օրն անցնում է նա մտերմական չըջանակի մէջ, բարեկամների, սպաների եւ տիկիների հետ: Իր տրամադրութեան տակ ունի գեղեցիկ, հեքիաթական զգեսակ, սպասաւորներ, կառքեր, ինքնաշարժ — եւ առհասարակ այն ամենը, ինչ որ հարկաւոր է մահկանացուների հաճոյքի եւ երջանկութեան համար: Հրամանատարը պատերազմից առաջ, խաղաղութեան ժամանակ, ամբողջ երեսուն եւ ինը տարի ապրել է «ձանձրալի», կեանքով: Այդ կեանքի մէջ հաճոյք չէ տեսել նա: Ոչ «բաւարար», ամսական է ունեցել, ոչ խշտանութիւն եւ ոչ փառք: Համազգեստի փայլուն կոճակները, որ կրել է նա այնքան տարիներ հպարտութեամբ եւ ինքնաբաւականութեամբ, նրան չէին տալիս իրական փայլելք եւ իրական խշտանութիւն:

Բայց ահաւասիկ պատերազմը: Եւ նա մէկէն ամեն ինչ ստացաւ: Նրա համար ամբան մի գեղեցիկ օր իրականացաւ երկար տարիների, յոգնատանջ տարիների փայլուն երազը: Եւ պատերազմը դառնում է հրամանատարի համար անհունապէս սիրելի մի իր, անմահ գանձ, որ երբէք, երբէք չպէտք է ձեռքից բաց թողնել: Իր այս տեսակէտը նա կամենում է տարածել բոլորի վրայ եւ ուզում է հասկացնել, որ օգտակար է պատերազմը մինչեւ իսկ նրանց համար, որոնք կուում են դիրքերում եւ որոնք գտնւում են մահուան սողոյգ վտանգի տակ:

«...Այս փոփոխութիւնը կուգէի մի օր ցոյց տալ մեր պարոն խաղաղասէրներին, որոնք այնպէս են կարծում թէ պատերազմը միայն կոտորած է... Փողոցի սպասաւորը այսօր աւելի շատ դրամ է վաստակում, քան խաղաղութեան ժամանակ վաստակում էր վաճառականը... Միւս կողմից՝ տեսնել էք դուք այն երիտասարդ զինուորներին, որոնք վերադառնում են ռազմածակատից: Արեւի պէս վառւում են կարծես, առողջ են եւ զուարթ: Դրանցից շատերը խաղաղութեան ժամանակ տառապում էին զրասնենականերում, միշտ տկար, վտիտ, թուլակազմ: Հաւատացէք

ինձ, որ աշխարհը երբէք այնքան առողջ չէ եղած, որքան այժմ: Թերթեցէք սակայն մեր լրագիրներից մէկն ու մէկը եւ դուք կը կարողաք միայն համաշխարհային կատաստրոֆի մասին, արիւնանեղ եւրոպայի մասին եւ չգիտեմ ուրիշ էլ ինչ քաների մասին, որ այդ պարոնները իրար են խառնում...

Անշուշտ, պատերազմի բնագիտական կողմը չէ, որ հետաքրքրում է զօրքերի հրամանատարին եւ ոչ էլ նրա բնկերաբանական հետեւանքները: Անդրէաս Լացկօի հերոսը հարցին նայում է զարմանալի պարզութեամբ եւ իբրեւ մարդկութեան բարիք նկատում է այն, ինչ որ իր համար յանկարծական բարիք է եղել: Նրա «տեսութիւնները» ոչ մի հետաքրքրութիւն չեն ներկայացնում: Ինչ որ հետաքրքրական է նրա մէջ բացասական իմաստով՝ անշուշտ՝ նրա հոգեբանութիւնն է, որ տիպիքական է եւ ոչ անհատական: Դրամատիրական դասի մտածութիւնն է այդ: Պատերազմը այդ մտածութեան համաձայն բարիք է, որովհետեւ դրամատիրական դասը օգտւում է նրանից եւ շահագործում է այն իր բնկերային տիրապետութեան համար: Անշուշտ, պատերազմը կարող է նաեւ չարիք գառնալ դրամատիրական դասակարգի համար, որովհետեւ նա կարող է սօցիալական յեղափոխութիւն ստեղծել: Բայց կասեմ չկայ, որ դրամատիրական մտածողութիւնը այսպէս հետեւողական չէ եւ յամենայն դէպս այսօր «յոռետեսական» չէ: Դրամատիրութիւնը ընդհանրապէս հակուած չէ «խաղաղ շահագործման» ժամանակաշրջանում՝ վատ հեռանկարներ տեսել: Եւ մինչեւ իսկ, երբ սօցիալական հաշտութիւնը վտանգւում է եւ նրան յաջորդում է սօցիալական յեղափոխութիւն — դրամատիրութիւնը միշտ հակուած է լինում մտածելու, թէ սա մի միջադէպ է միայն: Այս հիմնական հոգեբանութիւնը, որ երեւան է գալիս Անդրէաս Լացկօի հերոսի մէջ, կապուած է ընդհանրապէս այն հոգեբանութեան հետ, որով * դրամատիրական դասակարգը չի կարողանում տեսնել՝ իր նուաճումների մէջ իր անխուսափելի ռեյացումը: Եւ քանի որ այսպէս է՝ դրամատիրական դասակարգը գնում է դէպի պատերազմ՝ այնպէս, ինչպէս երեխաները գնում են հեքիաթի յետեւից:

Այս հոգեբանութեան վերլուծումով Անդրէաս Լացկօն ցոյց է տուել, թէ պատերազմը ստեղծուած է շահագործող դասակարգի կողմից եւ թէ նա կապ չունի հայրենիքի մեծութեան հետ, եթէ անշուշտ հայրենիքը չընդունենք շահագործող փոքրամասնութեան սեփական կալուածքը:

Բայց այս փոքրամասնութեան շահը եւ նրա հետ կապուած հոգեբանութիւնը պահանջում են, որ իր տիրազորութիւնները ազնիւ գործ նկատուին եւ զինուորականի շարագործութիւնը ազգային հերոսութիւն անունը ստանայ: Հանրի Բարբիւսի «Կրակ»-ի մէջ տասնապետ Բերտրանը մի օր սարսափով զգաց, որ ապագան այսօրուան զինուորի գործերը աւա-

զգինների գործերի հետ կը համեմատի եւ ո՛չ Պլուտարքի կամ Կլոնելի հերոսների գործերի հետ: Բայց Ընդրէաս Լացկօի հրամանատարը այդ զգայնութիւնը չունի, եւ այնպէս է դաւանում, թէ ինքը ազգային հերոս է:

Այս ազգային հերոսը պատերազմի ընթացքում պաշտամունքի եւ հետաքրքրութեան առարկայ էր դարձել: Մի օր արտասահմանեան մի ազգեցիկ թերթի աշխատակից տեսակցութիւն է խնդրում նրանից: Այս տեսակցութեան ժամին հրամանատարը երեւում է իր բնորոշ գծերով:—

Ամենից առաջ խօսեց նա իր քաջարի զինուորների մասին, նրանց գործերը փառաբանելով: Հերոսներ են նրանք, մահից երբէք չեն վախենում, կրում են ծանր բեռ եւ վեր են ամեն տեսակ զովասանքից: Նա ցաւ յայտնեց, որ չափաւ կարողանայ իր քաջերից իւրաքանչիւրին տալ այն ամենը, որին նրանք արժանի են: Եւ քարծր ձայնով նայրենիքից պահանջեց, որ այդ հերոսներին ցոյց տրուի անվերջանալի երախտագիտութիւն նրանց գերազոյն հաւատարմութեան համար: Նա յայտարարեց, թէ բոլոր իր զինուորական շրանշանները պէտք է համարել իր զինուորներին ուղղուած մեծարանք: Եւտոյ մի քանի խօսք արտասանեց թշնամի զինուորների ցոյց տուած քաջութեան մասին եւ իր յայտարարութիւնները վերջացրեց այն կատարեալ վստահութեամբ, որ ունի նա վերջնական յաղթանակի վերաբերմամբ:..

Այս պաշտօնական յայտարարութեան մէջ երեւում է ինքը մարդը, կեղծ, խարդախ եւ անմարդասէր, հայրենիքը եւ զինուորներին իրապէս արհամարհող, բայց երգուող նրանց անունով, որովհետեւ այդպէս է պահանջում վայրկեանը: Այդ հրամանատարները մեծ մասամբ խուսափում են պատերազմական վտանգներից եւ իրենց անձը միշտ ապահով վայրի մէջ են պահում: Հարիւր հազարաւոր լուռ եւ հնազանդ զինուորները նրանց համար «թնդանօթի միս» են: Եթէ թշնամին առաջնայ՝ այդ մարդկային թշուառական զանգուածները կը նետէ նրանց արշաւանքի առաջ եւ ինքը քաջաբար ու հերոսաբար ետ կը նահանջէ: Եւ սակայն միշտ յաղթող կը ձեռք բերէ, ինչպէս էր Ընդրէաս Լացկօի Der Sieger-ը: Բայց այս թուամորթութիւնը նա կը ներկայացնէ, որպէս հերոսութիւն, որպէս մի զոժուարին զոհաբերութիւն:—

«... Այսօրուան հրամանատարի կեանքում» այս կէտը ամենաողորմական կողմն է, այն, որ մենք չենք կարող ինքներս կրակի առջև գտնուել: Մեր ամբողջ կեանքի ընթացքում պատրաստուում ենք պատերազմի համար, մենք հոգով եւ մարմնով զինուորներ են, եւ սակայն ուրիշներից ենք լսում կոռուի ապրումները,...

Եւ ազգեցիկ թերթի աշխատակիցն էլ հիանում է, որ Նորին Ղսեմութիւնը այդքան ծանր զոհարելութիւն է յանձն առնում հայրենիքի համար:

Անդրէաս Լացիօի կեանքով եւ ծանր ապրումներով լեցուն այս պատմածքը վերջանում է զարհուրելի էջով: Թերթի աշխատակիցը միամտութիւն էր ունեցել հարցնելու, թէ Նորին Ղսեմութեան կարծիքով պատերազմը երբ կը վերջանայ: Այս հարցին հրամանատարը պատասխանել էր երկինք ցոյց տալով, թէ պատերազմի վախճանը նրա գաղտնիքն է եւ թէ մարդս ոչինչ չի կարող իմանալ տատաւածային գաղտնիքներից:

Բայց երբ մի քիչ ժամանակ յետոյ ամբարտաւան յաղթողը ինքնաշարժի մէջ սլանում էր՝ իր կեանքին եւ խոհերին անձնատուր, յիշեց նորէն թղթակցի յիմարական հարցը. —

«... Նորին վսեմութիւնը երբ յոյս ունի, թէ պատերազմը կը վերջանայ... Յուսա՛ւ... Յուսա՛ւ թէ երբ կը քնի խաղաղութիւն... Ի՛նչ քարիք կարող է սպասել խաղաղութիւնից մի հրամանատար: Եւ այսպէս՝ ոչ-զինուորականը չի կարող հասկանալ, որ հրամանատարը պատերազմի ժամանակ միայն հրամանատար է, եւ գններալը այն ժամանակ է միայն գններալ: Իսկ խաղաղութեան ժամանակ նա ուրիշ ոչինչ է, բայց եթէ մի որեւէ պարոն պրոֆէսոր...»

Այսպիսի ներքին խորհուրդներ ունէր մեծ հրամանատարը, քաջարի յաղթողը, ազգային հերոսը այն միջավայրում, որ գտնուում էր պատերազմի արիւնահեղ դաշտից ոչ հեռու, ուր ամեն ժամ բերում էին անօրինակ տանջանքների մէջ մեռնող մարդկային գոյութիւններ եւ ուր տիրում էր պատերազմի սանդղած աւերը, թշուառութիւնը, քայքայումը:

Բայց ժողովրդական գանգուածների տառապանքը, աշխատաւոր դասերի այդ անվերջանալի զոհերը ոչինչ չարժէին մեծափառ յաղթողի համար: Նա ծառայում էր կապիտալիզմի արիւնահեղ ոյժին եւ գիտէր, որ նրա նպատակը իրագործելու համար անհրաժեշտ էին այդ բոլոր զոհերը...

Եւ իր տղո՛ւ մտքերի մէջ՝ յաղթողը լսեց որոտի՝ հեռաւոր ձայները եւ տեսաւ թէ ինչպէս կրակի բոցերը վառւում են հորիզոնի վրայ: Նորին Ղսեմութեան աչքերը փայլատակում են ուրախութիւնից եւ նա մրմնջում է. —

„Փա՛ղք Աստուծո՛ւ, դեռ պատերազմ կայ...“

(“Gott sei Dank! Noch gab es Krieg...“)

Անդրէաս Լացիօի այս մտայլ գործը պատկերացնում է պատերազմի այն շրջանը, երբ տակաւին գիտակցութեան չէին եկած մասսաները եւ երբ կարելի էր դրամատիրական դասերի արիւնալի դաւը հայրենիքի անունով նուիրականացնել:

Այդ ժամանակն անցնում է ստեյպնո Վշխատաւորական բանակները, որ իբր զինուոր ուղարկուած էին պատերազմի դաշտը, զէպքերի երկաթէ տրամաբանութեան տակ գիտակցութեան են գալիս — եւ առաջանում է զայրոյթ ու դառնութիւն պատերազմի խորդախ հեղինակների դէմ:

“Heimkehr,, ը այդ զայրոյթի արտայայտութիւնն է, գեղարուեստական վերլուծումը այն հոգեբանութեան, որ առաջանում է զինուորի մէջ պատերազմից տուն վերադարձին:

Այդտեղ երեւում է այն խոշոր ալիքը, որ բարձրանում է պատերազմի վերջին շրջանում եւ որ պիտի խեղդէր պատերազմը իր ահաւոր յորձանքների մէջ:

IV.

Ընդդէմս Լացկօի պատմուածքների մէջ “Heimkehr,, ը — վերադարձը — ամենէն զրամատիրականն է: Միւս պատմուածքների մէջ հոգեկան ներքին տագնապը խեղդում է ցաւի ներքոյ եւ զրամատիրական գործողութիւն չէ դառնում: Այստեղ հանդարտ զգացումը հետզհետեւ ոյժ է ստանում, զէպքերի անդիմադրելի ազդեցութեան տակ ներքին տագնապը դառնում է փոխորիկ եւ վերջանում է արիւնահեղ վերջաւորութեամբ:

Պատերազմը սարսափելի զրամաներ է ստեղծում:

Ընդդէմս Լացկօն ոչ միայն ներկայացրել է պատերազմական շրջանի կեանքը, ֆիզիքական եւ բարոյական տանջանքը, ամենամաշլ իրականութիւնը իր տարբեր կողմերով, այլ եւ ներկայացրել է մարդու ներքին զրաման այդպիսի ուժգին էպօքի մէջ:

Պատմուածքի հերոսն է երիտասարդ իսհան Բոգդան, որ պատերազմի դաշտից վերադառնում է տուն: Բոգդանը հունգարական մի գիւղից է: Ընդդէմս Լացկօն մի քանի բնորոշ գծերով ներկայացնում է գիւղի կեանքը պատերազմից առաջ: Ընհող եւ սակաւահող գիւղացիներ են ապրում այդտեղ: Գիւղի մէջ իշխում է տակաւին աւատական տէրը, հունգարական մագնատը, որին գիւղացիները երկիւղածութեամբ եւ խոնարհութեամբ անուանում են Gnädiger Herr: Այդ ողորմած տէրը գիւղի վերին մասում զգեակ ունի, որտեղ ապրում է հանգստութեամբ եւ որտեղից անօրինում է գիւղացիների ճակատագիրը: Դղեակի հետ միասին, որ միջնադարեան կեանքի մնացորդն է, տէրը ունի նաեւ աղիւսի գործարան, որ կապիտալիստական կեանքի արտայայտութիւնն է: Եւ այսպէս, թէ կալուածատէր եւ թէ գործարանատէր՝ պահում է նա գիւղացի աշխատաւորներին ճորտական կացութեան մէջ, շահագործելով նրանց հին ժամանակների բոլոր օրէնքներով:

ԻօՏան Բօգդանը ծառայում է այս ամենակարող պարոնի մօտ Նա ձիապան եւ կառապան է միաժամանակ, խնամում է ձիաներին սիրով եւ գուրգուրանքով եւ թոցնում է իր տիրոջը կառքի վրայ, ուր էլ տեղը հրամայէ:

Այս կացութիւնը ծանր չէ ԻօՏան Բօգդանի համար ընդհակառակը, նա գոհ է իր վիճակից, ապրում է կատարեալ անգիտակցութեամբ եւ մինչեւ իսկ հպարտ է նրանով, որ սպասաւորում է գիւղի տիրոջը:

Ընդդէմս Լացկոն ԻօՏան Բօգդանի անձնաւորութեան մէջ ներկայացրել է մի կատարելապէս պահպանողական բնաւորութիւն, որ հանդարտութեամբ կատարում է իր «պարտականութիւնը», եւ որ խնարհութեամբ համակերպւում է տիրոջ կարգերին: Այն ժամանակ, երբ գիւղական աշխատաւորների ներկայացուցիչը գնում է նրա մօտ եւ ուզում է նրան կազմակերպել աշխատաւորութեան մէջ՝ ընդդէմ գիւղի կալուածատերի եւ գործարանատերի՝ ԻօՏան Բօգդան յարձակւում է գործաւոր պրօպագանդիստի վրայ եւ ապասկելով նրան հասկացնում է, թէ այլ եւս չպիտի համարձակուի զրգռել նրան իր տիրոջ դէմ:

Այսպէս էր ԻօՏան Բօգդանը պատերազմից առաջ, հունգարական գիւղում:

ԻօՏան Բօգդանը երիտասարդ էր եւ գեղեցիկ: Երբ որ կառքի վրայ բարձր նստած, ձիերի սանձը ձեռքում, տանում էր իր տիրոջը — գիւղի քահանայ տէրին: Նա հիմա քահանայ տէրին էր: Բայց ԻօՏան Բօգդան այդ աղջիկների մէջ ուներ մէկը, գեղեցիկ Մարշան, որին սիրում էր նա երիտասարդական գորովանքով եւ որի հետ ամենքի խոստովանութեան համաձայն՝ սրանչեւի զոյգ էր: ԻօՏան Բօգդանի համար անխառն երջանկութեան օրեր էին այն օրերը, երբ նրա տէրը, գիւղի իշխանը, թօթաւում էր նրա ուտերը եւ արտայայտում էր իր հրճուանքը Բօգդանի եւ Մարշայի սիրոյ համար:

Բայց այդ երջանկութեան օրերը երկար չտեւեցին:

Պատերազմը ամեն ինչ յեղաշրջեց:

Երիտասարդ եւ գեղեցիկ ԻօՏան Բօգդան պատերազմի մէջ ծանր վէրք է ստանում, երկար եւ տաժանելի ամիսներ անց է կացնում հիւանդանոցների մէջ, ապա մէկ աչքով կոյր եւ դէմքի մի մասը այլանդակուած՝ վերադառնում է դէպի իր հայրենի գիւղը:

Պատմութեան օկուում է այստեղից:

Ընդդէմս Լացկոն արուեստագէտի ներքին յուզումով պատմում է, թէ ինչպիսի խորտակուած հօգով ԻօՏան Բօգդանը վերադառնում էր տուն: Նա այլ եւս առաջուայ մարդը չէ: Ընդամենը երկու տարի էր անցել

այն անձնականալի օրերից, երբ նա գիւղում աշխատում էր, առողջ էր, երիտասարդ էր, եւ անհունապէս երջանիկ էր գեղեցիկ Մարշալի սիրով:

Իսկ ի՞նչ է այժմ: Այլանդակուած, կուրացած, ծերացած հոգով եւ իր ամբողջ կեանքով՝ Երկաթուղին հետզհետեւ մոտենում է մտերիմ գիւղի սահմաններին: Իօհան Բօգդանի սիրտը տրոփում է բուռն զգացումների մէջ: Ահաւասիկ երեւում են ծանօթ դաշտերը, ահաւասիկ օրօրում են սիրելի ծառերը ամառային հրաշալի հովի տակ, ահաւասիկ բարձր շէնքը գիւղի վերին մասում — կախարդական զղեակը: Վնացքի պատահանից տեսնում է Բօգդանը այդ բոլորը — եւ նրա սիրտը անասելի դառնութեամբ լալիս է իր թշուառական կեանքի վրայ: Ի՞նչ է բերում իր հետ գէղի տուն՝ երկու տարուայ զարհուրելի արկածներից յետոյ: Մէջքին կպած է նրա ողջ հարստութիւնը — զինուորական ազդատիկ պարկը, հինցած ու աղտոտ, որ շուտիւնէ կերպով ցոյց է տալիս նրա կատարեալ թշուառութիւնը: Ինչն էլ ֆիզիկապէս այլասերուած եւ զարձած այլ եւս մի աւելորդ ու անպէտք գոյութիւն: Ահաւասիկ դողդողալով խնում է նա գնացքից, ահաւասիկ գիւղի փողոցի կայարանը: Իօհան Բօգդանը մտածում է թէ հիմա ծանօթներ, բարեկամներ կերեւան, կը բարեւեն, կ'ողջագուրուեն: Բայց ոչ որ չէ հետաքրքրում նրանով, ոչ որ չէ տեսնում անգամ, թէ ինչպէս մի խղճալի մարդ, մութացիկի պարկը մէջքին, իղաւ գնացքից եւ կայարան մտաւ: Անգամ կայարանի հսկողի կինը — Իւլին — որի հետ նա մանկական օրերից ծանօթ, զրացի է եղել՝ ոչ մի ուշադրութիւն չդարձրեց նրա վրայ:

Իօհան Բօգդանը դարձել է այդ գիւղի համար կատարելապէս անձանալի:

Գիւղի աւերակ փողոցների միջով առաջանում էր Բօգդանը, ծնուած մի կենտրոնական մտահոգութեան տակ: Ինչպէս կը զիմաւորէր նրան իր գեղեցիկ Մարշան: Երսիքէ՛ր նրան այդ վիճակի մէջ եւս, մէկ աչքով կոյր, այլանդակուած Բօգդանին: Մէջքի պարկից երրեմնակի հանում էր նա մի կտորած հայելի, դիտում էր նրա մէջ իր տրորուած գէմքը — եւ դառնագին հառաչում էր այդ ծանր տեսարանի հանդէպ: Բայց չէ՞ որ վերջապէս Իօհան Բօգդանը զոհել է այդ բոլորը հայրենիքի համար. —

“Մարշան պիտի նպարտանայ նրանով, որ իր Բօգդանը հայրենիքի ծառայութեան մէջ է այսպէս դարձել: Պիտի նպարտանայ...”

Եւ մի գառն քրքիւղով պատասխանում է Բօգդանը այդ յիմարական մտածութեան: Մէկ օրուայ մէջ Բօգդանին պատկերանում է հետզհետեւ այն անդառնալի փոփոխութիւնը, որ կատարուել է գիւղում: Նրա բացակայութեան ժամանակ: Ինքը գնացել է ազգամաւկատ, իր երիտասարդական արիւնը թափել է “հայրենիքի”, համար, իսկ իր տէրը, եւ նրա պէս միւս անաշխատ եւ շահագործող տէրերը, շահագործել են նաեւ պատե-

բազմը, նաեւ հայրենիքը Բագդանի հոգում, նրա գիւղացիական հանդարտ, պահպանողական գոյութեան մէջ հետզհետեւ բարձրանում է զայրոյթը, յուզւում է բնական, անգիմադրելի կատաղութիւնը: Նա իմանում է, որ աղիւսի գործարանի տէրը այժմ ուումբեր եւ վառօդ պատրաստող գործարան է հիմնել, որպէսի աւելի շատ վաստակ անի: Նա տեսնում է որ գիւղի մեծերը եւ հօգոնբը ոչինչ, բացարձակապէս ոչինչ չեն կորցրել այդ դժոխային պատերազմի մէջ, այլ ընդհակառակը շահել են, բազմապատիկ կերպով շահել են “հայրենասիրական”, պատերազմից:

Իօհան Բագդանը հետզհետեւ գիտակցում է պարզ, որ հայրենիքը եւ հայրենիքի գաղափարը վաստակի աղբիւր է դարձել նրանց համար, առեւտուր, գործարանի գիւղացի ձիապանի միջին, քառասական մտայնութեան մէջ հետզհետեւ լոյս է տարածւում — եւ նա որոշ տեսնում է աշխարհը, առանց խաբէական գոյնի, առանց խարդախութեան: Իօհան Բագդանը տեսնում է, որ գիւղի տէրը ոչ միայն խլել է նրա երիտասարդութիւնը, նրա գեղեցկութիւնը, ոչ միայն ծայր աստիճան աղքատացրել է նրան — այլ եւ խլել է նրա սիրելի հարսնացուն, գեղեցիկ Մարշային: Դաւիթ Թագաւորի պէս նա ունէր այնքան հաճոյք, այնքան փառք ու հարստութիւն եւ ինչպէս հին կտակարանի Թագաւորը, որ պատերազմի դաշտ է ուղարկում գեղեցիկ կին ունեցող զօրավարին, որպէսզի նրա կինն էլ ինքը վայելի — այնպէս էլ հունգարական գիւղի կալուածատէր գործարանատէրը, այսինքն գիւղի Թագաւորը Բագդանին պատերազմի դաշտ է ուղարկում, որպէսզի վերջինս մեռնի հայրենիքի համար, իսկ ինքն էլ խլէ նրա հարսնացուն իր հաճոյքի համար:

Եւ երբ Իօհան Բագդանը պատերազմի դաշտից վերադառնալով՝ սիրտը անհուն վշտով լի, պատահում է գեղեցիկ Մարշային եւ խօսում է նրա հետ իրենց սիրոյ մասին — գիւղի Թագաւորը միջամտում է եւ հրամայում է Բագդանին շնորհել բնաւ հին կապի մասին:

“... Եթէ մի անգամ՝ էլ լսեմ, որ դու գլխացաւանք ես պատճառում՝ Մարշային, խիստ կը քարկանամ՝ եւ քեզ սատանայի մօտ կուղարկեմ... Հասկանո՞ւմ՝ ես...,”

Համբերատար, հանդարտաբարոյ եւ պահպանողական գիւղացին բորբոքւում է վերջապէս կալուածատէրի եւ գործարանատէրի անձնաւորութեան մէջ նա տեսնում է հին աշխարհը իր բոլոր անիրաւութեամբ: Ցեմնում է իր դէմ կանգնած մի անազնիւ մարդ, որ շահագործել է նրան անխնայ կերպով, գարշապարի տակ է նետել նրա կեանքն ու երիտասարդութիւնը եւ այժմ էլ նենգաւորութեամբ սպանում է նրան “սատանայի մօտ ուղարկել,”

Եւ բռնկած ու կատաղի՝ ծառանում է նա կալուածատէրի դէմ:—

“... Սատանայի մօտ... Ողորմած պարոնը կամենում է ինձ սատանայի մօտ ուղարկել: Թող ինքը գնայ սատանայի մնտ: Ես արդէն եղել եմ՝ այնտեղ: Ես արդէն ամբողջ ութ ամիս դժոխքի մէջ եմ՝ եղել: Ահաւասիկ դէմքս: Ողորմած պարոնը կարող է տեսնել, որ ես դժոխքից եմ՝ գալիս արդէն: Այստեղ հովանաւորողի դեր խաղալ, գրպանները մինչեւ քերանը լեցնել եւ միւսներին մնոնելու ուղարկել — շատ յարմար է ի հարկ է: Ով մնացել է այստեղ հանգիստ, նա չպէտք է միւսներին սատանայի մնտ ուղարկի, որոնք նրա համար դժոխքի մէջ են եղել արդէն...”

Անդրեաս Լացկոն կանգնեցնում է այսպէս միմեանց դէմ երկու անձնաւորութիւն, որոնք երկու տարբեր գաղափարների խորհրդանշան են եւ երկու տարբեր գասակարգերի ներկայացուցիչ են: Մինչեւ այժմ նրանցից մէկը իշխում էր միւսի վրայ, եւ վերջինս հնազանդ ստրուկի պէս տանում էր ամեն տեսակ անիրաւութիւններ: Բայց բարոյական եւ տնտեսական շահագործումը իր շարունակական զարգացման մէջ հասնում է մեծ չափերի — եւ պայթում է ինչն իր մէջ: Այս պայթումը չպէտք է բնաւ մեքենական ձեւով բմառնել, ինչպէս յաճախ բմառնում են տիրող գասակարգի տեսաբանները: Շահագործումը պայթում է այն ժամանակ, երբ շահագործուող կողմը գիտակցութեան է գալիս, անհրաժեշտ կամեցողութիւն է ցուցահանում, կանգնում է շահագործողի դէմ եւ իր զօրութեամբ խորտակում է նրա իշխանութիւնը:

Անդրեաս Լացկոն պատմութեամբ արտայայտում է այդ ճամբորդութիւնը հոգեբանական շրջանակի մէջ եւ գեղարուեստական տիպերի շուրջը: Իօհան Բոգզանը, մի անհատական գոյութիւն չէ: Նա մի ամբողջ գասակարգ է, ճնշուած, հարստահարուած, աշխատաւոր եւ սեփականաշուրկ, որ ծառանում է վերջապէս հարստահարողի դէմ եւ ամէհի ոյժով գետնին է զարկում նրան—

“... Եւ այսպէս նրա կորուրը անսահման եղաւ: Պայթելու պատրաստ, կանգնած էր նա այնտեղ (գործարանատէրի հանդէպ), ուժգին պրկուած մկաններով, ինչպէս մի վայրի կենդանի... Նա տեսաւ թէ ինչպէս տէրը, սպառնալից՝ եւ արաւոր, յարձակուեց նրա վրայ... Բայց նա այլեւս չէր զգում՝ նրա հարուածը... Մի ոստիկնով քաշեց նա պատեանից որսի դանակը եւ խրեց տիրոջ կողի ոսկրների մէջ... Բոլորովին թեթեւ, ինչպէս սովորել էր պատերազմի դաշտում...”

Անդրէաս Լացկօի պատմուածքը ուժգին զգացումներէ եւ կրքերի պատմութիւն է: Այս գրուածքը ակուում է Տերոսի հոգու հանգարտ նրկարագրութեամբ: Սկզբնական շրջանում պատմուածքի Տերոսը համակերպուող տրամագրութիւն եւ հոգեբանութիւն ունի: Այս հոգեբանութիւնը բնածին մի յատկութիւն չէ: Նա իր ժամանակի եւ իր տնտեսական դիրքի արտայայտութիւնն է: Բայց ժամանակը փոխում է, պատերազմը ծնում է տնտեսական ահաւոր չարիք, մարդկանց հոգեբանութիւնն էլ զարգանում է սօցիալական պայմաններին համընթաց չափով: Մի կողմում կանգնում են մարդիկ, որոնք շահագործում են հայրենիքը եւ օգտագործում են պատերազմը: Միւս կողմում գտնուում են մարդիկ, որոնք ամեն ինչ զոհաբերում են մի հայրենիքի, որ իրենց համար գոյութիւն չունի: Եթէ այս հակամարտութիւնը պատերազմից առաջ դեռ չէր հասել իր բարձր կէտին, պատերազմի ընթացքում, քալլ առ քալլ, սօցիալական կեանքի մշտական ներգործութեան ներքոյ հասնում է իր ուժգին արտայայտութեան — եւ ծնւում է սօցիալական ու անհատական զարհուրելի դրամա:

Անդրէաս Լացկօի պատմուածքը այս մեծ դրամայի մի բնորոշ արտայայտութիւնն է, իր ծաւալով փոքր, բայց շէքսպիրեան դրամաների բնոյթով եւ շէքսպիրեան ուժգին ընդհարումներով:

պատմուածքի մէջ Տերոսի հոգեբանութեան հետ միասին դուրս ելնելու պատերազմի ժամանակամիջոցը գիւղում, տնտեսական կեանքի եւ տնտեսական ձեւերի փոփոխութիւնը, գիւղի բնորոշ բարքերը, ընդհանուր միջավայրը, մարդկանց կենցաղը եւ աշխարհահայեացքը:

Այս բոլորը տրուած է պատմուածքի ծաւալին համապատասխան չափով — կարճ, ցայտուն եւ բնորոշ գծերով: Ըստ հետաքրքրական եւ պատմուածքի մէջ Իօհան Բօգգանի հանգիպումը գործաւոր Միհայլիի հետ: Այս գործաւորը պատկանում է գիւղական պրօլետարիատի վարի խաւին, կեանքը գիտէ բաւական, հասկանում է հասարակական յարաբերութիւնների բնոյթը գործնական կերպով, փորձուած, ապրած, դառնացած մարդ է: Սակայն նրա ըմբռնողութիւնը գիւղի ընդհանուր յետամնաց միջավայրի մէջ շատ նկատելի չէ — եւ դեպի Միհայլին քաղցրենիական խաւերի կողմից արհամարհանք կայ միայն, մանաւանդ որ ֆիզիքապէս տկար է, ստպատաւոր է: Իօհան Բօգգանը Նոյնպիսի վերաբերմունք է ունեցել դեպի Միհայլին: Ինքը ստրկական, հնազանդութիւն է ունեցել դեպի գիւղի տէրը, հաւատացեալի խորին մեծարանք՝ դեպի Աստուած եւ դեպի հայրենիքը: Իսկ Միհայլին չի ճանաչել ոչ մէկը եւ ոչ միւսը: Եւ այժմ, զարհուրելի պատերազմից յետոյ, Միհայլին աւելի ամրապնդուած աշխատաւոր մարդու իր գործնական հայեացքների մէջ՝ բացատրում է Իօհան Բօգգանին եղած փոփոխութեան եւ պատերազմի խմստը: —

“... Աղիւսի գործարանը... Աղիւսի գործարանը այժմ այլ եւս գոյութիւն չունի: Ո՞վ է հիմա աղիւս գործածում: Հիմա վառօդ ու գնդակ են պատրաստում: Տեսնո՞ւմ ես այնտեղ կանգնած վագոնները: Նրանք լեցուն են վառօդով: Ամեն շաքաթ օր մի ամբողջ գնացք է ծանապարհում այստեղից... Տե՛ս, ամեն քան կարգին բաժանուած է: Մէկը գնում է պատերազմի դաշտ եւ ուղեղը ցրում է գնդակի դիմաց, միւսը մնում է տանը, վառօդի գործարան է շինում՝ եւ դղեակը զարդարում է ոսկիներով... ”

Վշտացած Իօհան Բօգդանը շփոթ եւ վարանոտ մի բան է պատասխանում այս դառն խօսքերին եւ Միհայլին շարունակում է. —

“... Այո՛, իհարկէ: Եւ քանի որ բնտրութիւնը հարուստ պարոնների ձեռքին է, նրանք անում են այն, ինչ կամենում են... Ի՞նչ ես ստանում քո կորցրած աչքիդ համար: Տարեկան հարիւր կրո՞ն: Բայց միւսները, որոնք պատերազմի դաշտում ազգանքին կերակուր դարձան, նրանք այդքանն էլ չեն ստանում պատերազմից: Ողորմած պարոնը սակայն այնտեղ վերելում վաստակում է օրական իր հազարները, եւ չէ վտանգում իր ճկողիթն անգամ: Այսպէս ե՛ս էլ կարող էի պատրիօտ լինել... ”

Ընդդէմս Լացկօն գործաւոր Միհայլի միջոցով բաց է անում սօցիալական հասարակարգի ամբողջ վէրքը: Պարզ, անպաճոյճ, անյաւաքնոտ խօսքեր են Միհայլի արտասանած խօսքերը, բայց նրանց մէջ թագնուած է աշխատաւոր եւ տառապող մարդկութեան արդար զայրոյթը: Զայրոյթ, որ վերջապէս պիտի արտայայտուի բուռն, փոթորկալի գործողութիւններով:

Ընդդէմս Լացկօի հերոսը կեանքի բովից անցած էւ Նա կարգացող կամ մտաւորական չէ: Աշխատանքի մարդն է գործնականապէս, տառապած, իր գոյութեան վրայ ամեն օր զգացած տիրող դասերի ծանր լուծը: Սեփականազուրկ է Նա բառիս կատարեալ նշանակութեամբ, Մաքսիմ Գորկու ստեղծած շատ հերոսների նման: Եւ հեղինակն էլ այդ գրութեան մէջ աչքի բնկնող նմանութիւն ունի Մաքսիմ Գորկու հետ, կեանքի իր պարզ պատկերացումով, ժողովրդական տիպերի անխարդախ ցուցադրութեամբ, կենդանի ռեալիզմով, բնական արուեստով եւ բարձր գաղափարականութեամբ:

Ընդդէմս Լացկօի այդ գրութեան մէջ երեւում է ոչ թէ մէկ անձի ապաստամբութիւն իր անիրաւ տիրող դէմ, այլ մէկ ամբողջ դասակարգի

ծառայում չափազործող դասակարգի դէմ ԽՍՀՄ Բազմաշրջան մի մարդ չէ։ Նա մի սօցիալական ամբողջութիւն է, մի գաղափար է։


Այն, ինչ որ 1916 թուականին նկատել է Անդրէաս Լազկան իր տնտեսագործական զգայնութեամբ, իրականութիւն դարձաւ 1917 թուականին Ռուսաստանի ընդարձակածաւալ գաշտերում։ Նոյն երեւոյթը կատարուեց նաեւ Անդրէաս Լազկոյի երկրում, 1919 թուականին, որ պատմական պարագաների բերումով մի քանի ամիս տեւեց այն ժամանակ։

Բայց ոչ որ չէ կարող տեսլ, թէ այդ երեւոյթը յետագայում իր վերագործը չպիտի ունենայ եւ թէ Ռուսաստանի մեծ շարժումը պիտի շանցնի նրա սահմաններից դուրս։


Մարդիկ պատերազմի մէջ եւ պատերազմից յետոյ այլ եւս նոյնը չեն, որովհետեւ սօցիալական կեանքն ինքնին խորապէս յեղաշրջուած է։

Այս տեսակէտից Անդրէաս Լազկոյի պատմաւածքները ներկայացնում են ոչ միայն Մարդիկ պատերազմի մէջ, այլ եւ տեսնում են ապագայի երեւոյթները այժմեան ընթացքի մէջ։

Այդպէս է արուեստը։ Քանի որ նրա ուղին՝ կեանքի ուղին է միաժամանակ...



70



[14]

[14]

ԱՄ
66754

ՀԱՅ Գիտնական Գրադ. Գրադ.



220066754